ՍԱՄՎԵԼ ԿՈՍՅԱՆ

ԱՄԵՆԱՏԽՈՒՐ ԵՎ ԱՄԵՆԱՈՒՐԱԽ ՔԱՌՍՈՒՆՈՏՆՈՒԿԸ

ԵՐԵՎԱՆ

ԱՐՄԱՎԻՐ
ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

2015

ՀՏԴ 821.19-93 Կոսյան
ԳՄԴ 84 (5Հ)-4
Կ 750

Հրատարակվել է պետական աջակցությամբ

Խմբագիր՝ Արմեն Ավանեսյան

Կոսյան Սամվել
Կ 750 Ամենատխուր և ամենաուրախ քառսունոտնուկը / Ս. Կոսյան. - Եր.: Արմավ, 2015. - 80 էջ:

Սամվել Կոսյանի «Ամենատխուր և ամենաուրախ քառսունոտնուկը» մանկական վիպակ է՝ արկածային սկզբունքներով գրված: Կենտրոնական կերպարը՝ Կուկուլու անունով քառսունոտնուկը, ճանապարհորդում է՝ հայտնվելով մի շարք դժվարին իրադրություններում, սակայն չի ընկրկում և հասնում է իր նպատակին:

ՀՏԴ 821.19-93 Կոսյան
ԳՄԴ 84 (5Հ)-4

ISBN 978-9939-863-18-4

© Կոսյան Սամվել, 2015
© «Արմավ», 2015

ՀԵՌԱԳԻՐ ՃՈՒԿՈՒԼՈՒԻՆ

Ոչ ոք չգիտեր, քառսունոտնուկի անունն ինչու է Ճուկուլու... Ինքն էլ չգիտեր, բայց ուրախ էր, որ անուն ունի, որովհետև քառսունոտնուկները անուն չեն ունենում: Ընդհանրապես կենդանիներն ու միջատները ապրում են առանց անունի: Միայն ընտանի կենդանիներին են մարդիկ անուն դնում, ասենք, կովին՝ Դալար, շանը՝ Բողար, կատվին՝ Մռռան, գառանը՝ Սևուկ... Քառասունոտնուկը երբեք ընտանի չի եղել և ով ասի,

որ ընտանի քառսունոտնուկ է տեսել, մի հավատացեք: Մեր քառսունոտնուկը մի առանձնահատկություն էլ ուներ, բանաստեղծություններ էր գրում... Ու երբեմն-երբեմն մագլցում էր որևէ ծաղկի ցողունի վրա և արտասանում էր... Նա իր բանաստեղծություններն անգիր էր հիշում, որովհետև միջատները գրել չգիտեն... Հորինում էր ծաղիկների ու խոտերի, սարերի, ամպերի, աստղերի ու արևի մասին: Ոչ մեկը չգիտեր, դրանք լա՞վ բանաստեղծություններ էին, թե՞ վատը, բայց Ճուկուլուն սիրում էր պարծենալ, որ ինքն առաջին քառսունոտնուկն է, որ կարողանում է ստեղծագործել: Ու արտասանում էր.

Ծաղիկը խոտերից բարձր է,
Ծաղիկը փոքր է ծառերից,
Ծաղիկը ամպերից ցածր է,
Ծաղիկը բարձր է խոտերից...

Իհարկե ծափահարողներ չկային: Ոչ մեկին հետաքրքիր չէր, ինչ է արտասանում Ճուկուլուն, որովհետև չգիտեին ինչ է բանաստեղծությունը: Այ, եթե ուտելու լիներ, կուտեին ու կիմանային: Իմիջիայլոց,

ընտանի կենդանիներն էլ չգիտեն ինչ է բանաստեղծությունը, թեև անուն ունեն ու ապրում են մարդկանց հետ... Դրանից Ճուկուլուն տխրում էր, որովհետև եթե կենդանիներն ու միջատները իմանային ինչ է բանաստեղծությունը, գուցե բոլորովին ուրիշ լինեին, ավելի խելացի, կյանքն էլ ավելի հետաքրքիր կլիներ ու կկարողանային մարդկանց էլ հասկանալ ու իմանալ նրանք ինչ են ուզում: Լսում էր թռչունների երգն ու մտածում էր, որ հրաշալի կլիներ, եթե թռչուններն իրենց երգը իր բանաստեղծությունների տեքստերով երգեին: Բայց թռչունները շարունակում էին երգել, նրա վրա ուշադրություն էլ չդարձնելով, իսկ առավել մեծ թռչունները նրան չէին էլ նկատում, ուր մնաց լսեին, թե ինչ է ասում: Ու Ճուկուլուն նորից տխրում էր ու լինում էին պահեր, որ թվում էր, ինքն աշխարհի ամենատխուր քառսունոտնուկն է և հավանաբար լաց կլիներ, բայց քառսունոտնուկները արցունքներ չունեն ու չգիտեն ինչ է լացելը: Նման պահերին ոտքերը ոտքերի վրա էր գցում ու երկար նայում էր ինչպես է արևը թաքնվում սարերի հետևում և արտասանում էր.

Արևը կորավ
Սարի հետևում,
Իզուր մի փնտրեք
Նրան վերևում...

Մի օր էլ, երբ թվում էր երբեք այդքան տխուր չի եղել, բացատի փոստատարը, որը մի սովորական



զատիկ էր, միայն կարմիր թևերի վրա սև պուտերը սովորականից մեծ էին, նրան հեռագիր բերեց... Հեռագիրը տեսնելով, Ճուկուլույի տխրությունն ասես չէր էլ եղել ու անսահման ուրախացավ, նույնիսկ քիչ էր մնում ցողունի վրայից ցած ընկներ... Հեռագիրը ուղարկել էր 7-րդ բացատի ընկերուհին՝ Կուկուլուն: Իրականում Կուկուլուն անուն չուներ, պարզապես Ճուկուլուն էր մտքում նրան այդպես անվանում, քանի որ Ճուկուլուն նաև ասպետ էր և չէր հանդուրժի, որ ինքն անուն ունենա, իսկ ընկերուհին ոչ: Ասպետները միշտ էլ ամեն ինչի պատրաստ են իրենց ընկերուհիների համար: Ճուկուլուն չէր շտապում կարդալ, թե Կուկուլուն ինչ է գրել... Նախ, ցողունով բարձրացավ ավելի վեր ու հանգիստ տեղավորվելով ծաղկի բաժակի մեջ, սկսեց կարդալ: Կուկուլուն նրան հրավիրում էր մասնակցելու իր ծննդյան տոնին: «Ուռա՜», բղավեց Ճուկուլուն ու, այնուամենայնիվ, ծաղկի բաժակից ցած ընկավ... Լավ է քառասուն ոտքերից ոչ մեկը չկոտրվեց, թե չէ բժիշկը ողջ օրը պիտի չարչարվեր, որպեսզի գտներ, թե քառասունից որն է կոտրվել... Մի անգամ, երբ էլի ընկել էր, երկար չէր հասկանում, որ ոտքն է վնասվել, որովհետև թվում

էր, թե բոլոր ոտքերն էլ ցավում են... Միայն բժշկին հաջողվեց բոլորը շոշափելուց հետո գտնել վնասված ոտքը... Ու պետք եղավ արդեն բժշկի համար շտապ օգնություն կանչել, որովհետև բժիշկը վնասված ոտքն այնքան երկար փնտրեց, որ բոլորովին ուժասպառվեց: Հիմա ցավեր չուներ և դա արդեն լավ նշան էր ու Ճուկուլուն իրենից անկախ մի նոր բանաստեղծություն արտասանեց, գուցեև այդ պահին էլ հորինեց.

Կորչի տխրությունը
Ու կեցցե տոնը,
Թող որ շուտ բացվի
Այս փակ կոկոնը...
Ու ծաղիկ դառնա
ՃքեՂ ու սիրուն,
Որ ուրախանա
ՉքնաՂ Կուկուլուն...

ՃՈՒԿՈՒԼՈՒՆ ԳՆՈՒՄ Է ԿՈՇԻԿՆԵՐԻ ԽԱՆՈՒԹ

Ճուկուլուն ոգևորվեց, էլի մի քանի բանաստեղծություններ հորինեց ու հանկարծ անսպասելի աչքն ընկավ ոտքերին և հասկացավ, որ ինչ որ բան այնպես չէ: Ճուկուլուն բարեկիրթ քառսունոտնուկ էր և չէր կարող ընկերուհու ծննդյան տարեդարձին ոտաբոբիկ գնալ: Իհարկե, կենդանիներից և միջատներից ոչ մեկը կոշիկ չէր հագնում և անտառում ընդունված չէր կոշիկ հագնելը, սակայն այդ միտքը համարյա չմխիթարեց նրան: Հիշեց, որ նեղ օրվա համար դրամ է հավաքել ու որոշեց կոշիկի խանութ գնալ ու կոշիկներ գնել: Նույնիսկ պատկերացրեց, ինչպես են բոլորը զարմացած, մի քանիսն էլ նախանձով, իր կոշիկներին նայում և ինչպես են գովում իր ճաշակն ու նրբանկատությունը: Ամենակարևորը ընկերուհու ոգևորությունն էր, ում համար Ճուկուլույի այս քայլը վկայությունն էր նրա, թե ինչքան նվիրված ընկեր է, ով ընկերուհու համար պատրաստ է, ամենաանսպասելի արարքների: Եվ երևակայությամբ էլի ինչ որ բաներ պատկերացնելով, Ճուկուլուն այդպես

ոգևորված էլ գնաց կոշիկների խանութ: Երբ հասել էր խանութին և ուզում էր մտնել, աչքը ընկավ խանութի դռանը փակցրած հայտարարությանը, որի վրա մեծ-մեծ տառերով գրված էր. «ՆԵՐՍ ՄՏՆԵԼԻՍ ԽՆԴՐՈՒՄ ԵՆՔ ՈՏՔՆԵՐԸ ՍՐԲԵԼ»: Եվ քանի որ Ճուկուլուն դաստիարակված քաղաքաքաղաքացի էր և, մյուս կողմից էլ, սիրում էր գնահատել ուրիշների աշխատանքը, ներս մտնելուց առաջ պատրաստվեց խանութի շեմին գցված փալասի վրա մաքրել ոտքերը: Ոտքերը քսում էր փալասին ու հաշվում՝ մեկ, երկու, երեք... Մյուսները գալիս ու միանգամից մտնում էին խանութ, սակայն Ճուկուլուն նրանց չէր էլ նկատում, այնքան էր տարված ոտքերը մաքրելով: Ոտքերը եռանդով քսում էր փալասին ու շարունակում էր հաշվել՝ չորս, հինգ, վեց... Մի պահ խառնեց հաշիվը և ստիպված էր նորից հաշվել... Որպեսզի այլևս հաշիվը չխառնի, որոշեց ավելի ուշադիր լինել...

Յոթ, ութ, ինը, տասը... Հոգնեց ու որոշեց մի քիչ հանգստանալ, ապա շարունակեց՝ տասնմեկ, տասներկու, տասներեք...

- Փալասը կծակես,- կատակեց ինչ որ մեկն ու ծիծաղեց:

- Մի խանգարիր,- առանց կատակողի կողմը նայելու սաստեց Ճուկուլուն:

- Այդպես մինչև իրիկուն չես վերջացնի,- նորից կատակեց նույն ձայնը և ավելի ուժեղ ծիծաղեց:

Ճուկուլուն փորձեց ուշադրություն չդարձնել, բայց, միևնույն է, հաշիվը նորից խառնեց: Եվ տեսավ, որ կատակողը մի փոքրիկ մոծակ է... Փոքրիկին տեսնելով բարկությունը մեղմացավ: Ճուկուլուն գիտեր, որ փոքրիկներին չի կարելի կոպտել, եթե նույնիսկ իրենց անվայելուչ են պահել: Բայց փոքրիկ մոծակի պետքն էլ չէր, թե մեծերն իր մասին ինչ են մտածում և ծիծաղը շարունակելով, վերև թռավ... «Երևի ծնողներ չունի»,- մտածեց Ճուկուլուն, այլապես կիմանար, որ անքաղաքավարու-



թյուն է ծիծաղել մեծահասակների վրա: Նա դեռ էլի մտքեր կարտահայտեր, բայց հիշեց, որ հաշիվը խառնել է ու հարկավոր է նորից հաշվել... Սակայն այս անգամ առաջին տասնյակը բաց թողեց և սկսեց տասնմեկից հաշվել: Ոտքերը քսում էր փալասին ու հաշվում՝ տասնհինգ, տասնվեց, տասնյոթ... Քսան թվի վրա նորից հանգստանալու համար դադար տվեց... Եվ առաջին անգամ հանգիստ շունչ քաշեց, չվախենալով, որ կարող է թվերը խառնել... Քսանը նրա ձախակողմյան ոտքերն էին, հիմա աջակողմյան քսանն էր հաշվելու: Այդ ընթացքում արևը արևելքից հայտնվել էր զենիթում: Հարկավոր էր շտապել... Եվ նորից սկսեց մեկից... Քրտնել էր, ծանր էր շնչում, բայց վախենում էր դադար տալ, որպեսզի չխառնի հաշիվը... Աստիճանաբար մոտեցավ ավարտին՝ տասինը, քսան... Ոգևորությունից ինքն իրեն ծափահարեց, սակայն... Մինչ հասցրել էր քառասուն ոտքերը սրբել, խանութում ընդմիջման ժամ էր և խանութը փակել էին: Սակայն Ճուկուլուն շատ էր խանդավառվել, որ ի վերջո հասցրել է մաքրել բոլոր քառասուն ոտքերը և խանութի փակվելուց առանձնապես չտխրեց: Միայն որոշեց հեռու չգնալ, որպեսզի ոտքերը նորից չկեղտոտվեն: Հենց խանութի կողքին էլ պառկեց խոտերի մեջ ու մինչև խանութի բացվելը որոշեց

որևէ բանաստեղծություն նվիրել ընկերուհուն... Զարմացավ, որ գլխում ոչ մի տող չի ծնվում... Սկսեց շուրջը նայել... Հանկարծ արտույտը ծառից թռավ ներքև և խոտերի մեջ ինչ-որ բան էր փնտրում... Իրենից անկախ սկսեց արտասանել.

Կապույտն ու գորշը,
Գորշն ու կապույտը,
Ծառից ցած թռավ
Հիմար արտույտը...

Ուզում էր շարունակել, սակայն հիմար բառը զայրացրեց: Ճուկուլուն սովոր չէր կոպտել որևէ մեկին և գիտեր, որ չի կարելի որևէ մեկի մասին այդ և այլ վիրավորական բառերով արտահայտվել: Ու նորից արտասանեց.

Կապույտն ու խոտը,
Խոտն ու կապույտը,
Ծառից ցած թռավ,
Ուրախ արտույտը...

Հիմա կարծես ավելի լավ էր... Իսկ ընկերուհուն նվիրված բանաստեղծությունը որոշեց վաղը գրել, 7-րդ բացատ գնալու ճանապարհին:

ԿՈՇԻԿՆԵՐԻ ԽԱՆՈՒԹՈՒՄ

Խանութի ներսում Ճուկուլուն զարմանքից ու հիացմունքից շփոթվել, չգիտեր ինչ կոշիկ ընտրել... Բոլորն էլ գեղեցիկ էին, տարբեր գույնի ու

ձևի: Ճուկուլուն երբեք չէր մտածել, որ կոշիկները կարող են այդքան գունավոր ու բազմազան լինել: Մերթ մեկն էր ընտրում, մերթ մյուսը, հետո աչքն ընկնում էր բոլորովին այլ կոշիկների վրա: Վերջապես ընտրեց կարմիր գույնի թեթև սանդալները: Վաճառողուհին, որ մի գեղեցիկ մայիսյան բզեզ էր, չափից դուրս կանաչ թևիկներով, վերջապես մոտեցավ նրան ու հարգալից հարցրեց...

- Ընտրեցի՞ք:

- Այն կարմիր սանդալները:

- Ո՞ր համարը:

- Ամենափոքրը... Քսան զույգ...

- Այդ կոշիկից մի քանի զույգ է մնացել,- մեղավոր ժպտաց վաճառողուհին,- գուցե ուրիշը ընտրեք...

- Այն կողքի շականակագույնը,- արագ կողմնորոշվեց Ճուկուլուն:

- Հիանալի ճաշակ ունեք,- ասաց մայիսյան բզեզը,- միայն թե դրանցից էլ մի քանի զույգ է մնացել:

Ճուկուլուն հանկարծ հասկացավ, որ գործերը բարդանում են: Հո չէ՞ր կարող տարբեր գույնի ու ձևի կոշիկներ գնել: Մոլորված կանգնել ու չգիտեր ինչ անել: Վաճառողուհին էլ հեռացել էր: Հավանաբար կոշիկներն այստեղ մեծաքանակ չեն, ամեն ձևից ու գույնից մի քանի զույգ, որովհետև անտա-

ռում չես իմանա, քանիսի մտքով կանցնի կոշիկի խանութ մտնել... Իսկ ոտաբոբիկ չէր ուզում գնալ... Ճուկուլուն վառ երևակայություն ուներ և մտքում՝ կոշիկների հետ կապված, մեկը մյուսից հետաքրքիր տասնյակ պատմություններ էր հորինել ու ափսոսում էր, որ այդ պատմությունները քամին կարող է քշել ու չգիտես ուր տանել... Առանձնապես թանկ ու կարևոր էին Կուկուլուի հետ զրույցները: Ճիշտ է, նրա հետ մտքում էր զրուցել, սակայն հավատացած էր, որ Կուկուլուն էլ մտքում իր հետ է զրուցել:

- Որոշեցի՞ք,- նրա մտքերի թելը կտրեց վաճառողուհին:

- Դժվար է,- տնքաց Ճուկուլուն,- մի զույգ չի, երկուսը չի...

- Տարբեր կոշիկներ պիտի վերցնեք,- խորհուրդ տվեց վաճառողուհին,- հիմա անտառում տարբեր կոշիկները նորաձև են...

- Երևի,- նորից տնքաց Ճուկուլուն, - ոնց որ ուրիշ ճար չկա...

- Այս խանութը երբեք միանման քսան զույգ կոշիկ չի ստացել:

- Գոնե մեծ ու փոքր չլինեն...

- Ձեր ոտքերն ո՞ւր են, հո տանը չե՞ք մոռացել,- սրամտեց մայիսյան բզեզը և այնպես կանգնեց, որպեսզի արևի շողն ընկնի թևերին ու թևերի կանաչը փայլի շողի տակ:

- Որ մոռացել եմ, ո՞նց եմ խանութ եկել,- զարմացավ Ճուկուլուն:

- Ուրեմը կարող եք կոշիկները տեղում փորձել,- և վաճառողուհին այնպես ժպտաց, որ Ճուկուլուին թվաց, թե արևի շողը իր վրա թեքեց...

- Իհարկե կփորձեմ,- հաստատեց Ճուկուլուն:

- Ուրեմը ամենափոքր չափը,- հիշեցրեց վաճառողուհին:

- Ամենափոքրը:

Ու մինչ Ճուկուլուն կորոշեր, որ ոտից փորձի, վաճառողուհին գույնով ու ձևով մեկը մյուսից տարբեր տասնյակ կոշիկներ լցրեց նրա առաջ: Ճուկուլուն ոտքերը մաքրելիս հասկացել էր, որ պետք չէ աջ ու ձախ ոտքերը խառնել, այլ պետք է սկսել մի կողմի ոտքերից ու վերջացնելուց հետո անցնել հաջորդ կողմին: Որոշեց ձախ կողմից սկսել... Մեծավմասամբ կոշիկները մեծ էին լինում: Վաճառողուհին հները տանում և նորերն էր բերում, ամեն անգամ չմոռանալով ժպտալ Ճուկուլուին: Ճուկուլուն փորձում էր ու միայն երրորդ խմբաքանակից իր ոտքի չափով մի քանի կոշիկ գտավ: Իսկ վաճառողուհին անընդհատ նորերն էր բերում... Ձախ կողմի ոտքերի կեսն արդեն կոշիկների մեջ էին: Վաճառողուհին շարունակում էր նորերը բերել, սակայն կարծես հոգնել էր և այլևս չէր ժպտում: Ճուկուլուի բախտը բերեց և վերջին խմբաքանակներից մե-

կում իր ոտքի չափով միանգամից հինգ կոշիկ գտավ... Վաճառողուհու դեմքին էլ մի թույլ ժպիտ հայտնվեց: Նա մի պահ կանգնեց, խորը շունչ քաշեց ու գնաց հաջորդ խմբաքանակի ետևից... Վերջապես ձախ կողմի բոլոր ոտքերը կոշիկների մեջ էին և գործի կեսն արված էր: Միայն թե վաճառողուհին արդեն օրորվելով էր քայլում: Ճուկուլուն իսկապես խղճաց նրան, բայց չէր կարող ոտքերի կեսը կոշիկների մեջ, մյուսները ոտաբոբիկ, դուրս գալ: Մյուս կողմից էլ տեսնում էր, որ հոգնածությունից մայիսյան բզեզի թևերի կանաչը խամրել է: Իսկ վաճառողուհին իրեն տոկուն էր պահում և քիչ հանգստանալուց հետո կոշիկների մի նոր խմբաքանակ բերեց: Հերթը աջ կողմի ոտքերինն էր... Վաճառողուհին բերում էր, Ճուկուլուն փորձում էր և մեծ չափի կոշիկները դնում էր մի կողմ... Հակառա-



կի պես, մեծ չափերն ավելի շատ էին և ամեն խմբաքանակից հազիվ էր մեկ կամ երկու կոշիկ ընտրում: Իսկ բզեզի աչքերը հոգնածությունից ահագին առաջ էին եկել դեմքից, և ոտքերը պարանի պես ոլորված էին: Գուցե աչքերը չէին էլ շարժվել, գուցե Ճուկուլուին թվում էր և գուցե, եթե բանաստեղծություններ չհորիներ, բզեզի ոտքերը պարանի հետ չհամեմատեր... Իսկ վաճառողուհին, Ճուկուլուի մտքերից անտեղյակ, շարունակում էր մեծ չափի կոշիկները տանել և նորերը բերել... Ճուկուլուն ինքն էլ էր հոգնել և առաջին անգամ զղջաց, որ քառասուն ոտք ունի: Բայց երբ տեսավ, որ միայն երեք ոտքն է առանց կոշիկի, կրկին գոտեպնդվեց... Վաճառողուհին նոր խմբաքանակը բերեց ու երբ ուզում էր փորձվածները տանել, անսպասելի, եղեգի պես օրորվեց ու ընկավ կոշիկների վրա: Ճուկուլուն չկորցրեց իրեն և միանգամից օգնություն կանչեց... Մյուս աշխատողները արագ մոտեցան, ինչ-որ մեկը շտապ օգնություն զանգահարեց, վաճառողուհու վրա ջուր ցանեցին, ապա գրկած տարան և խանութի ներսում դրված մահճակալին պառկեցրին: Քիչ անց եկավ նաև բժիշկը: Վերջապես վաճառողուհին ուշքի եկավ: Բոլորը Ճուկուլուին չարությամբ էին նայում, մտածելով, որ նրա պատճառով է վաճառողուհին վատ զգացել: Ճուկուլուն ինքն էլ կարծում, որ մեղավոր է: Բայց հե-

տո իրեն մխիթարում էր, որ մեղք չունի, եթե բնությունն իրեն ոչ թե երկու, չորս կամ վեց, այլ քառասուն ոտքով է ստեղծել...

Երբ բոլորը խաղաղվեցին, Ճուկուլուն սկսեց նոր խմբաքանակի կոշիկները փորձել... Եվ եթե չամաչեր, բարձր կգոռար: Հենց առաջին երեք կոշիկներն իր ոտքով էին: Հաջողությունից ոգևորված նույնիսկ խանութի դռան տեղն էր կորցրել: Երբ վերջապես դուրս եկավ, արևն արդեն սարերի գագաթին էր և ուր որ է կթաքնվեր նրանց թիկունքում: Ճուկուլուն չնայած հոգնել էր, բայց նայելով գույնզգույն կոշիկներին, չէր կարողանում ուրախությունը զսպել: Աշխարհի ամենատխուր քառսունոտնուկը հիմա աշխարհի ամենաուրախն էր: Եվ ինքն էլ չզգաց, ինչպես սկսեց երգել.

Կոշիկ կոշիկ,
Կարմիր, դեղին,
Հազար ձևի
Տեղը-տեղին:

Էլ մի ասա,
Էլ մի ասա,
Հրաշք չէ՞ սա...
Հրաշք է սա:

ՃՈՒԿՈՒԼՈՒԻ ԵՐԱԶԸ

Ոչ մեկը չի կարող ասել քառսունոտնուկները ինչպիսի երազներ են տեսնում: Հնարավոր է, որ ոչ մի երազ էլ չտեսնեն ու չիմանան նույնիսկ երազն ինչ է: Բայց Ճուկուլուն երազներ տեսնում էր, այն էլ գունավոր երազներ: Այդ գիշեր երազում կոշիկներով էր և կոշիկները շողշողում էին գունավոր աստղերի պես, և ինքը քայլում էր իր կոշիկների արձակած լույսի միջով: Ափսոս չգիտեր ուր է քայլում, բայց կարևորը, որ բոլորը զարմացած իրեն էին նայում և բոլորն ուզում էին բարևել... Նույնիսկ մեծ թռչունները իջել էին ներքև և զգուշությամբ, որպեսզի նրան չվնասեն, քանի որ թռչունները երբեմն սիրում են կտցել քառսունոտնուկներին, երգելով ուղեկցում էին նրան... Մի երկու թիթեռ՝ կոշիկների լույսից հմայված, պտտվում էին Ճուկուլուի գլխավերևում ու իրենց գեղեցիկ թևերով հպվում էին նրան, այնքան քնքուշ, ասես զեփյուռը հպվեր: Ճուկուլուի համար տարօրինակ էր, որ բոլորն այդքան բարեհամբյուր են, բոլորին հաճելի է իր ներկայությունը: Նույնիսկ երկար բեղիկներով մի անծանոթ բզեզ մոտեցավ և բարևելու համար ձեռքը

բարեկամաբար նրան մեկնեց: Ճուկուլուն մի պահ շփոթվեց և չկարողացավ կողմնորոշվել, թե քառասուն ոտիկներից որով է հարմար բարևելը ու բարևելու համար միանգամից ոտիկներից մի քանիսը առաջ պարզեց, որի պատճառով կորցրեց հավասարակշռությունը և ընկավ մեջքի վրա: Սակայն ոչ մեկը չծաղրեց ու չծիծաղեց, հակառակը, մի քանիսը նույնիսկ ախ ու վախ արեցին... Ու պետք չէ մտածել, որ Ճուկուլուն անտառում ծնված ու մեծացած անբարեկիրթ մի քառսունոտնուկ էր, ով ոտքերով էր ուզում բարևել ու դրա համար էլ ընկավ: Պարզապես նրա ոտիկները նրա ձեռքերն են, այնպես որ նա միաժամանակ քառասունոտնուկ և քառասունձեռնուկ է: Իսկ այդ պահին անծանոթ բզեզը օգնեց նրան գետնից բարձրանալ: Ճուկուլուն շատ էր ուզում անպայման բարևել այդ բարի բզեզին, բայց մյուս կողմից էլ իսկապես բարեկիրթ էր և պարզ է, որ կոշիկը ոտքին չէր կարող բարևել: Նրա բախտից, կոշիկներից մեկը ոտքից ընկավ և Ճուկուլուն որոշեց այդ ձեռքով էլ բարևել: Քիչ հետո, երբ կրկին ինքն իր հետ էր, մտածեց, որ լավ կլինի, եթե նախօրոք որոշի որ ոտքով է բարևելու, որպեսզի անախորժություններից խուսափի ու հասցնի կոշիկը ոտքից ժամանակին հանել: Ու սկսեց մտքերի մեջ ընկնել, թե բարևելու համար ինչը ոնց է

հարմար: Երբ թվում էր գտել է լուծումը, անսպասելի մի ուրիշ լուծում էր գտնում, հետո մտածում էր, որ ամենալավը երրորդ լուծումն է, քիչ անց կրկին առաջինն էր հավանում և հայտնի չէ, ինչքան լուծումներ կգտներ ու կմերժեր, եթե չգիտես որտեղից հայտնված գունավոր մշուշը չտարածվեր անտառով և Ճուկուլուին իր մեջ առնելով վերև չբարձրացներ: Տարօրինակ էր, մշուշի հայտնվելուց Ճուկուլուն ոչ զարմացավ և ոչ էլ վախեցավ, պարզապես

հետաքրքիր էր թե մշուշը ինչքան է վերև բարձրացնելու: Մինչև հիմա նա միայն մասրենու ամենաբարձր ճյուղի վրա էր եղել ու երբևիցէ մտքով չէր անցնել, թե կարող է ամենաբարձր ծառերի կատարը տեսնել: Անտառը բոլորովին ուրիշ էր վերևից, անծանոթ էր, գաղտնիքներով լիքը: Գունավոր մշուշը անտառն ավելի խորհրդավոր էր դարձրել, շատ ծառեր ու թփեր բոլորովին անծանոթ գույն և ձև էին ստացել: Բայց ամենատարօրինակը, որ Ճուկուլուին թվում էր, ոչ թե մշուշն է իրեն բարձրացնում, այլ ինքն է թռչում: Չէր էլ երազել, որ կարող է թռչել ու հիմա թռչում էր և մեջը վախ չկար, որ կարող է ընկնել: Թռչում էր ու տրամադրությունն այնքան բարձր էր, որ նույնիսկ օդում բանաստեղծություն էր հորինում.

Թռչունները ներքևում են
Ես ավելի վերևում,
Թռչունները երևում են,
Խոտերը չեն երևում...

Մինչ բանաստեղծությունը կշարունակեր, մի քանի թափանցիկ թևավորներ հայտնվեցին ու Ճուկուլուի ոտիկները բռնելով, տարան հետները: Ճուկուլուն փորձեց հիշել, թե որտեղ է նրանց տեսել:

Թևեր ունեին, բայց թռչուն չէին, ապակու նման թափանցիկ էին և ծաղիկների պես բուրում էին: Իսկ գունավոր մշուշը խտանալով-խտանալով վերածվեց ծաղկազարդ գորգի, որի վրա էլ նստեցին թափանցիկ թևավորները: Ճուկուլուն ուզում ու չէր հասկանում ինչ կատարվում: Թափանցիկ թևավորները շրջապատել, ու մեկը մյուսին օգնելով Ճուկուլուի ոտքերն էին հաշվում: Վերջապես նրանցից մեկը հարցրեց.

- Այդքան ոտքն ի՞նչ ես անում:

- Քայլում եմ:

- Երկու կամ չորս ոտքը հերիք չի՞,- շարունակեց հարցնողը:

- Չգիտեմ,- անկեղծացավ Ճուկուլուն:

- Ավելի արա՞գ ես քայլում:

- Ինչպես մյուսները:

- Ոտքերիդ եղունգները քանի՞ օրում ես կտրում:

- Չեմ կտրում,- ավելի անկեղծացավ Ճուկուլուն,- ոտքերս եղունգներ չունեն:

- Քիչ անց նրան այլ հարց տվեցին:

- Գիտե՞ս ովքեր ենք...

- Թևերը տեսնում եմ... Թռչուն պիտի լինեիք, բայց թռչնի նման չեք...

- Որովհետև թռչուն չենք:

- Բա ի՞նչ եք:

- Հրեշտակներ:

- Հրեշտա՞կ,- զարմացավ Ճուկուլուն,- հրեշտակն ի՞նչ է:

Ճուկուլուի պատասխանից թափանցիկ թևավորները ծիծաղեցին և այնքան երկար ու բարձր, որ ծաղկազարդ գորգը սկսեց ճռալ-ճռճռալ, ճաքեր տալ ու թել առ թել քանդվել: Ճուկուլուն ուզում էր իմանալ ինչ է կատարվում, սակայն թափանցիկ թևավորներն անհետացել էին, ասես չէին էլ եղել: Իսկ ինքն ընկնում էր: Երբ մեծ ծառերի ամենա-

բարձր ծյուղերին հասավ, փորձեց բռնվել, սակայն ծյուղերը գազանների պես աղմկեցին և իրենցից հեռու հրեցին նրան: Ճուկուլուն վախից փակեց աչքերը, սպասելով, երբ է գետնին բախվելու: Բախում չեղավ, ցողի պես թեթև ու հանգիստ իջավ խոտերին, միայն թե կոշիկները չկային, ինչից ավելի վախեցավ և այնպես գոռաց, որ իր ձայնից էլ արթնացավ ու միանգամից ոտքերին նայեց... Կոշիկներն իրենց տեղում էին, նշանակում է տեսածը երազ էր: Ճուկուլուն դեռ երկար նայում էր կոշիկներին, ուզում էր համոզվել, որ սարսափելի ոչինչ չի եղել ու այն մտքից, որ իսկապես վատ բան չի եղել, նույնիսկ լսեց ինչպես է ուրախությունն իր միջից քշում վախին, որը թեև դիմադրում էր, չէր ուզում հեռանալ, այդուհանդերձ, պոչը քաշեց ու հեռացավ: Եվ կրկին Ճուկուլուն նույն ուրախ քառսունոտնուկն էր և կրկին արտասանում էր.

Ինչ լավ էր որ,
Ինչ լավ էր որ,
Երազ էր ու վերջացավ,
Ոչ հիվանդ կա,
Ոչ վիրավոր,
Ոչ կորուստներ ու ոչ ցավ...

ՃԱՆԱՊԱՐՀ ԴԵՊԻ 7-ՐԴ ԲԱՑԱՏ

Առավոտյան Ճուկուլուն զգաց, որ, այնուամենայնիվ, գիշվերա երազից տխրության մի բարակ թել է մնացել և փորձեց իր ներսից դուրս քաշել թելը, սակայն ծայրը չկարողացավ գտնել: Չհուսահատվեց, մտածեց, տխրությունը չի կարող երկար տևել, երբ առջևում շատ ավելի ուրախ բաներ են սպասվում, որոնցից ամենակարևորը Կուկուլուի ծննդյան տոնակատարությունն էր: Ճուկուլուն իմաստուն քառսունոտնուկ էր և գիտեր, որ բոլոր տխրությունները միայն վախկոտների ու ծույլերի մոտ են երկար մնում: Ճուկուլուն ոչ ծույլ էր և ոչ էլ վախկոտ ու բարձր տրամադրությամբ էր պատրաստվում ճանապարհ ընկնել դեպի 7-րդ բացատ: Նախ որոշեց լողանալ: Առավոտները, զանգակ կոչվող ծաղիկների մեջ ցողը շատ էր լինում: Ճուկուլուն շրջում էր ծաղիկները, որոնք ցնցուղի նման կախվում էին ցողուններից և լողանում էր ծաղկաբաժակների մեջ հավաքված ցողաջրով: Ցողը սառն էր ու դողացրեց, սակայն քիչ անց ցողի սառնության հետ ներսում առողջություն ու առույգություն զգաց, ինչը ավելի բարձրացրեց տրամադ-

ությունը: Ճուկուլուն գիտեր, որ ճանապարհ ընկնելիս տխուր բաների մասին չպետք է մտածել, որովհետև տխրությունը թուլացնում է մարմինը և փորձում էր իր կյանքի ուրախ պատմությունները հիշել... Ու չնայած Կուկուլուին նվիրված բանաստեղծությունը դեռ չէր հորինել, վստահ էր, որ կհասցնի, եթե ուրախությունը հետը լինի: Չէր հիշում ումից, բայց լսել էր, որ ուրախ երգը կարճացնում է ճանապարհը... Եվ սկսեց երգել.

Եվ ճախ, և աջ,
Եվ ճախ, և աջ,
Դեպի առաջ,
Առաջ, առաջ...
Ու կգա քեզ
Միշտ ընդառաջ,
Լույս ու քամի,
Հույս ու կակաչ,
Այդպես առաջ,
Ու միշտ առաջ,
Եվ ճախ, և աջ՝
Առաջ, առաջ...

Ոչ մեկը չի կարող ասել, Ճուկուլուն նույն հանգով ինչքան կերգեր, եթե մեկի հուսահատ ձայնը

անսպասելի չխառնվեր նրա երգին: Օգնություն կանչողը սարդոստայնում հայտնված ճանճն էր, որը փորձում էր ազատվել սարդոստայնից: Ճանճն ինչքան ուժ ուներ շարժում էր ձեռքերն ու ոտքերը, բայց չէր կարողանում ազատվել: Սարդոստայնի թելերը արտաքինից են բարակ ու նուրբ, իրականում ոչ մի միջատ ինքնուրույն չի կարողանում այդ թելերը կտրել: Ճուկուլուն միշտ էլ վախեցել էր սարդոստայնում հայտնվելուց և հիմա էլ հեռու կփախչեր, բայց չափազանց գթասիրտ էր և չէր կարող վշտի հանդեպ անտարբեր ու անզգա լինել: Պետք էր օգնել ճանճին, միայն թե չէր կողմնորոշվում ինչպես... Սարդոստայնը բավականին բարձր էր: Ճուկուլուն մի քանի անգամ ցատկեց, բայց ոտիկները չհասան սարդոստայնին: Մյուս կողմից էլ զգուշանում էր, որպեսզի ինքն էլ չհայտնվեր ճանճի կողքին: Իսկ ճանճի շարժումներն ավելի ու ավելի հուսահատ էին դառնում: Ճուկուլուն մտածեց խուճապի չմատնվել և հանգիստ որոշել անելիքը: Գնում-գալիս էր սարդոսայնի տակով ու մտածում էր ինչպես օգնել: Քառասուն ոտիկներով երեք քայլ առաջ և երեք քայլ հետ ու կարծես գտավ ելքը. կոշիկները սարդոստայնի վրա նետելով քանդել սարդոստայնը: Եթե Ճուկուլուն չկարողանար



օգնել ձանձին, երբեք իրեն չէր ների և Կուկուլուի ծննդյան տոնակատարությանն էլ չէր ուրախանա, հիշելով, որ չկարողացավ օգնել: Եվ առանց հապաղելու հանեց կոշիկները: Կոշիկները դիպչում էին սարդոստայնին ու, չվնասելով սարդոստայնը, ընկնում էին: Մի քանի անգամ փորձելուց հետո Ճուկուլուն գլխի ընկավ, որ թեթև կոշիկները հնարավոր չէ այնքան թափով նետել, որպեսզի քանդեն սարդոստայնը և ընտրեց ծանր կոշիկները: Առաջին կոշիկը ծակեց սարդոստայնը ու մնաց սարդոստայնի մեջ: Երկրորդն ու երրորդը լայնացրին անցքը և վերջապես հնարավորություն տվեցին ձանձին ազատվել: Սակայն առաջին կոշիկն այդպես էլ ներքև չընկավ ու անսպասելի հայտնված սարդը սկսեց սարդոստայնը կոշիկի շուրջը ամրացնել, երբեմն-երբեմն էլ զայրացած հայացք գցելով Ճուկուլուի վրա: Ազատված ձանձը տզզացտզտզաց ու առանց շնորհակալություն հայտնելու թռավ չգիտես ուր: Սակայն Ճուկուլուի ուշքն ու միտքը այլևս ձանձը չէր, մտածում էր սարդոստայնի մեջ մնացած կոշիկն ինչպես վերադարձնի:

- Կոշիկս վերադարձրու, - խնդրեց սարդին:

- Դու էլ ձանձին վերադարձրու,- խռպոտ ձայնով պահանջեց սարդը:

- Կոշիկը ուտելու չի,- փորձում էր սարդին համոզել Ճուկուլուն:

- Որ չի, ինքդ բարձրացիր ու վերցրու,- անսպասելի բարիացավ սարդը:

- Քո ինչին եմ պետք,- շարունակում էր համոզել Ճուկուլուն,- ինձ դժվար կմարսես:

- Պետք չես:

- Ուրեմը կոշիկս տուր:

- Դեռ ոչ մեկին ոչինչ չեմ տվել,- կրկին զայրացավ սարդը:

- Կոշիկն ի՞նչ ես անելու:

- Լավ բազկաթոռ կլինի:

- Քո՞նն է, որ բազկաթոռ ես սարքում,- վիրավորվեց Ճուկուլուն:

- Սարդոստայնն էլ քոնը չէր, որ քանդեցիր... Ծնորհակալություն էլ չհայտնեցին...

- Մի անգամ էլ եմ խնդրում, որ կոշիկը վերադարձնես...

- Ես էլ, որ բարձրանաս ու վերցնես...

Ճուկուլուն վաղուց էր հասկացել, որ սարդն իր վրա բարկացած է և ոչինչ չի վերադարձնելու, իսկ իրեն հանգիստ է պահում, որովհետև ծրագրել է իրեն էլ սարդոստայնը գցել: Այնպես որ չարժեր նրա հետ զրույցը շարունակել: Ճուկուլուն փորձված

քառսունոտնուկ էր, գիտեր, որ չարի հետ զրուցելը միշտ էլ տխրություն է բերում, մինչդեռ չէր ուզում տրամադրությունը փչացնել և որոշեց առանց այդ մի կոշիկի ճանապարհը շարունակել:

- Ո՞ւր,- նրա հետևից բղավեց սարդը, - բա կոշիկը:

- Իմ կոշիկն ինքն ինձ կգտնի,- ծիծաղեց Ճուկուլուն, հիշելով կիսատ մնացած երգը.

Եվ ձախ, և աջ,
Եվ ձախ, և աջ
Ծիծաղ ու երգ
Լսիր, եթե
Ունես ականջ:
Այդպես առաջ,
Եվ ձախ, և աջ,
Կարմիր, կապույտ,
Դեղին, կանաչ:
Առաջ, առաջ...

ՃՈՒԿՈՒԼՈՒՆ ՄԻ ԿՈՃԻԿ ԷԼ Է ԿՈՐՑՆՈՒՄ

Ճանապարհին անսպասելի հայտնված փոքրիկ առվակը Ճուկուլուին շատ զարմացրեց: Անցյալ անգամ առվակը կարծես չկար: Նշանակում է կամ չի նկատել, կամ էլ առատ անձրևներ են տեղացել: Իսկ առվակը ուրախ քչքչում էր, կարծես ինչ



որ բան էր ուզում Ճուկուլուին ասել: Եվ Ճուկուլուն որոշեց նրա ափին մի քիչ հանգստանալ ու, եթե ստացվի, Կուկուլուին նվիրված բանաստեղծությունն էլ գրել: Շատ-շատ էր ուզում, որ այդ բանաստեղծությունը ամենալավը լինի, սակայն դժվարանում էր ու չէր հասկանում՝ ինչու... Ինչ ասես մտածում էր, նույնիսկ, որ հնարավոր է ինքը լավ բան չի կարողանում գրել: Սովորականները կարողանում է, իսկ լավը չէ: Այդպես պատահում է, որ մի բանը ցանկանաս ու չստացվի... գուցե հետո կկարողանաս, միայն թե լավ է, երբ ցանկությունը ժամանակին է կատարվում: Ճուկուլուն, իհարկե, շուտ հուսահատվողներից չէր և հավատում էր, որ մինչև 7-րդ բացատ հասնելը, կկարողանա աշխարհի ամենահիանալի բանաստեղծությունը հորինել, և ոչ թե մեկը, այլ երկուսը: Շատ էր հավատում, որ ամենալավ տողերը առջևում իրեն են սպասում ու անպայման դեռ դիմավորելու են: Ու չզգաց ինչպես փակվեցին աչքերն ու ինչպես քնեց: Եվ կրկին գունավոր մշուշը շալի պես փաթաթվեց նրան, կրկին ինքը բարձրանում էր, նույնիսկ թվաց, ոտիկները քառասուն թևիկներ են դարձել ու այդքան թևիկներով ինքը թռչուններից էլ արագ է վեր բարձրանում, ամ-

պերից ավելի վեր: Ու սկսեց թափանցիկ թևավորներին փնտրել: Ուզում էր իմանալ ովքե՞ր են հրեշտակներն ու ինչու են թափանցիկ: Միաժամանակ մարմնի մեջ հաճելի առույգություն էր հայտնվել: Գունավոր մշուշը աստիճանաբար խտանում էր և Ճուկուլուի տակ նույն ծաղկազարդ գորգն էր, որի նախշերն այս անգամ ավելի գեղեցիկ թվացին... Միայն թափանցիկ թևավորները չկային: Ճուկուլուն նրանց փնտրելուց և գորգի վրա հենց այնպես գնալ-գալուց հոգնելով, մտածում էր ինչպես նորից անտառում հայտնվի: Ու երբ ելք էր փնտրում, թափանցիկ թևավորներից մեկը պտտվելով իջավ և հայտնվեց նրա կողքին:

- Եկա՞ր,- հին ծանոթի պես հարցրեց Ճուկուլուն:

- Քո համար եկա,- հանգիստ ասաց թևավորը:

- Ինձ նույն մշուշը բերեց,- անկեղծացավ Ճուկուլուն և վախենալով, որ թևավորը կարող է նորից անսպասելի անհետանալ, միանգամից հարցրեց. - Հրեշտակն ի՞նչ է, ինչո՞ւ անտառում չի ապրում:

- Հրեշտակի տունը երկնքում է,- հեքիաթ պատմելու պես պատասխանեց թևավորը,- հրեշտակները բարի էակներ են...

- Բա ձեր մարմի՞նը,- շարունակում էր Ճուկու-

լուն,-ինչո՞ւ եք թափանցիկ... Անունդ ի՞նչ է:

- Փոքր ենք, դրա համար էլ թափանցիկ ենք... Երբ մեծանանք, բարությունը ավելի շատ կլինի ու այլևս թափանցիկ չենք լինի... Այդքան հարց մի տուր: Հրեշտակներն անուն չունեն, մեզ Պահապան հրեշտակներ են ասում:

- Ափսոս,- հոգոց հանեց Ճուկուլուն:

- Պետք չէ ափսոսալ:

- Ափսոս,- կրկնեց Ճուկուլուն, - որ անտառում չեք ապրում:



- Երկնքում էլ տխուր չէ,- ասաց թևավորը:

- Ես առանց անտառի չէի կարող:

- Ես էլ առանց երկնքի... Յուրաքանչյուրի համար աշխարհի ամենագեղեցիկ տեղն իր ծննդավայրն է:

Ճուկուլուն ուզում էր հրեշտակին պատմել անտառի մասին, նկարագրել նրա գեղեցկությունները, բայց մարմնի ներքևի մասը խոնավանում էր, որից իրեն լավ չէր զգում: Շոշափեց գորգը, կարծելով ամպերը թրջած կլինեն, բայց գորգը չոր էր, մինչդեռ խոնավությունը սաստկանում էր և Ճուկուլուն խոնավությունից նույնիսկ մրսեց ու դողացրեց: Սառնությունը մարմնի միջով արդեն ոտիկներին էր հասել: Փորձեց հրեշտակից իմանալ խոնավության պատճառը, բայց հրեշտակն անհետացել էր, ասես չէր էլ եղել: Ծաղկազարդ գորգը նորից սկսեց ճռռալ-ճռճռալ, քանդվել և նախկինի նման ընկնելու վախից փակեց աչքերը: Երբ արթնացավ, միանգամից ճանաչեց անտառի ծանոթ ձայներն ու բույրերը: Նորից երազ էր տեսել, իսկ մարմինը սահել ու ներքևի մասով հայտնվել էր առվակի մեջ: Շատ կոշիկներ թրջվել էին: Ճուկուլուն դուրս եկավ ջրից, հանեց թրջված կոշիկները, դրեց արևի տակ չորա-

նալու և նոր միայն նկատեց, որ կոշիկներից մեկը չկա... Հավանաբար ջուրն էր քշել-տարել: Ճուկուլուն կորած կոշիկի համար շատ տխրեց: Ավելի տխրեց, երբ չկարողացավ հիշել, թե ջուրը հատկապես որ կոշիկն է տարել: Նրա համար լավ ու վատ կոշիկներ չկային և դժվարանում էր որոշել, թե որ երկու ոտքերն առանց կոշիկների թողնի... Ճիշտ որ լավ բան չէ կորցնելը և կորցնելիս միշտ էլ խնդիրներ են առաջանում: Ճուկուլուն տխրեց, տխրեց և մտածելով, որ տխրելով ոչինչ չի վերադարձնի, որոշեց սրանից հետո երկու ձեռքով բարևել, այն էլ միանգամից երկուսին: Ու այդ միտքը նրան շատ դուր եկավ: Հետն էլ ուրախ էր, որ ինքը ջուրը չի ընկել... Մնում է արևը չորացնի թրջված կոշիկները և կարելի է 38 կոշիկներով էլ ճանապարհը շարունակել: Սակայն, այնուամենայնիվ, կորած կոշիկների մասին բանաստեղծության մեջ մի փոքր տխրություն կար.

Ջրից բան ուզելը զուր է,
Զուր է ու տխուր է,
Ջուրը հետ չի տալիս ոչինչ,
Կոշիկներ ջան, ո՞ւր եք...

ՓՈՐՁԱՆՔԸ ՀԵՏԱՊՆԴՈՒՄ Է ՃՈՒԿՈՒԼՈՒԻՆ

Ճուկուլուի դեպի 7-րդ բացատ ճանապարհվելու հենց առաջին պահից, փորձանքը հետապնդում էր նրան: Փորձանքի բնավորությունն է, միշտ նրանց կողքին լինել, ովքեր՝ նրա կարծիքով, երջանիկ են: Նախ, որ փորձանքը չի սիրում երջանիկներին և երկրորդն էլ, որ երջանիկները միշտ անուշադիր ու անզգույշ են: Ճուկուլուն, պարզ է, որ ուրախ ու երջանիկ էր, որովհետև աշխարհում ոչ մեկը ծննդյան տոնի գնալիս չի տխրում, սակայն մտքով էլ չէր անցնում, որ փորձանքն իր հետևից է գալիս: Եվ որտեղի՞ց պիտի իմանար ու տեսներ, եթե փորձանքը մարմին չունի, որ երևա, անհոտ է, որպեսզի բույրը զգաս, ձայն չունի, որ լսես: Ճիշտ է ուրախությունն էլ մարմին, բույր ու ձայն չունի, սակայն ուրախությունը չի վնասում, իսկ երբ ուրախությունն ինքն է ուրախ լինում, յասամանի բույր է արձակում և սոխակի ձայն է հանում: Փորձանքն ուրիշ է, փորձանքը երբեք ուրախ չի լինում ու չի ուրախանում: Փորձանքին թողնես միայն վատություն անի, մարդկանց, կենդանիներին ու միջատներին ծանր

վիճակի մեջ գցի: Չկա մեկը, որ սիրի նրան կամ հետը ընկերություն անի: Ինչպես սիրես ու ընկերություն անես, եթե դու սովոր ես ընկերոջդ նվիրվել, փոխարենը փորձանքը մտածում է ինչպես վատություն անի ու քեզ փոսը, ջուրը կամ ձորը գցի: Դրա համար էլ ոչ մեկը չի ուզում հետը գործ ունենալ և բոլորը նրանից հեռու են փախչում: Ճուկուլուն էլ կփախչեր, եթե տեսներ, հոտն առներ կամ ձայնը լսեր: Նույնիսկ չգիտեր, որ սարդի ու սարդոստայնի պատմությունն էլ փորձանքի արածն էր, առվակի հետ կապված դեպքը նույնպես: Լավ է, շուտ հուսահատվողներից չէր և ամենաշատը դա էր փորձանքին բարկացնում, որովհետև փորձանքը իրեն չար էր պահում, որպեսզի ուրիշները հուսահատվեն ու անօգնական լինեն: Եթե Ճուկուլուն իմանար, որ փորձանքը նոր վատություններ է մտածում անել, իհարկե, զգույշ կլիներ և կմտածեր ինչպես պաշտպանվել: Բայց փորձանքի մասին չիմանալով, միայն կոշիկների համար էր անհանգստանում՝ չլինի՞ ջրից փչանան: Հերթով ստուգում էր և ուրախանում, որ առաջվա պես գեղեցիկ ու պայծառ գույն ունեն: Մնում էր հագնել ու վստահ առաջ շարժվել: Ճուկուլուն այդպես էլ արեց: Իսկ փորձանքը նայում էր Ճուկուլուի ուրախ ու առույգ շարժումներին ու բարկությունից քիչ էր մնում ինքն իրեն



վնասի: Գոռում էր, իրեն այսուայն կողմ էր գցում, կատաղությունից ձևացնում էր, իբր, պոկում է մազերը, սակայն Ճուկուլուի պետքն էլ չէր, որովհետև, այնուամենայնիվ, երջանիկները, քանի դեռ երջանիկ են, փորձանքից ավելի ուժեղ են և փորձանքը որքան էլ չարչարվի, նրանց չի կարող վնասել: Իսկ Ճուկուլուն իսկապես երջանիկ էր և քայլում էր ու երգում.

Թե ուրախ ես
Քայլիր ազատ,
Քայլիր ազատ,
Քայլիր ազատ...
Երգիր երգեր
Քեզ հարազատ,
Քեզ հարազատ,
Քեզ հարազատ...
Թե ուրախ ես
Քայլիր հպարտ,
Քայլիր հպարտ:
Վեհ ու անպարտ
Քայլիր հպարտ...

ՃՈՒԿՈՒԼՈՒՆ ՊԱՐԱՀԱՆԴԵՍՈՒՄ

Ճանապարհին հաճելի երաժշտությունը գրավեց Ճուկուլուին և որոշեց ճշտել, թե երաժշտությունը ինչ առիթով և որտեղից է հնչում: Ու անսպասելի միջատների պարահանդեսում հայտնվեց: Միջատները սիրում են պարել, հատկապես մոծակները պարում են ջրի վրա, օդում, որտեղ պատահի: Պարում են նաև զատիկները, մայիսյան բզեզները, մեծ ու փոքր մրջյուններն ու ճանճերը... Ով կարող է ասել, քա՞նի տեսակի միջատներ են ապրում անտառում: Անտառը մեծ է, իսկ միջատները շատ փոքրիկ են, որպեսզի հնարավոր լինի հաշվել: Դրա համար էլ Ճուկուլուն շատ զարմացավ, երբ մի տեղում հավաքված այդքան միջատ տեսավ: Առանձնապես շատ էին մոծակները: Կային երկար թևիկներով մոծակներ, կային բեղավոր մոծակներ, մի քանիսի ոտքերն ավելի երկար էին իրենց մարմիններից, կային տարբեր գույնի ու չափերի մոծակներ՝ կանաչ ու գորշագույն, արծաթափայլ ու երկնագույն թևերով... Բոլորի տրամադրությունը բարձր էր, բոլորը պարում էին կամ պատրաստվում էին պարել: Ճուկուլուն էլ էր պարել սիրում: Երբ փոքր էր, նույնիսկ պարի խմբակ հաճա-

խեց, սակայն հենց առաջին օրը՝ պարային վարժությունները կատարելիս, ոտքերն այնպես խառնվեցին, որ երկար չէր կարողանում նախկին դիրքին բերել: Այդ օրը շատ անգամներ փորձեց պարային վարժությունը ու գլխի ընկավ, որ մի բանը եթե չի ստացվում, կարիք չկա համառելու ու չարչարվելու, որովհետև միևնույն է, չի ստացվելու: Իսկ Ճուկուլուի անհաջողության պատճառը ոտքերի շատությունն էր: Ոնց էլ անում էր, ոտքերը խառնվում էին ու չէր կարողանում վարժությունը երկրորդ անգամ

կրկնել: Պարուսույցը, որ սկզբում քաջալերում էր Ճուկուլուին, նկատելով նրա վիշտը, փորձեց մխիթարել ու խորհուրդ տվեց թիավարության խմբակ գնալ: Սակայն թիավարության խմբակում էլ, միտեղանի նավակներով փորձնական մրցույթներից հետո մրցակիցները բողոքեցին, պահանջելով նրան թույլ չտալ մասնակցելու մրցումներին: Մասնակիցներն, իհարկե, ոչ չար էին և ոչ էլ նախանձ, պարզապես թիավարելիս, երբ Ճուկուլուի ձեռքերը հոգնում էին, արագորեն փոխում էր ձեռքերը և մյուս երկու ձեռքերով էր թիավարում, հետո հաջորդ երկուսով, դրանք էլ փոխարինում էր մյուսներով ու այսպես շարունակ: Մինչդեռ մյուսները միշտ նույն ձեռքերով անընդհատ թիավարելուց հոգնում էին և չէին կարողանում Ճուկուլուի հետ շատ թե քիչ հավասար մրցել: Մի քանիսը, Ճուկուլուին շատ չնեղացնելու համար, նույնիսկ առաջարկեցին Ճուկուլուի 38 ոտքերը կապել: Իհարկե, ոչ մեկը ոտքերը կապելու մտքի հետ չհամաձայնեց, միայն թե Ճուկուլուին բավականին հարգալից հասկացրեցին, որ թիավարության համար չափից ավելի շատ են նրա ոտքերը: Ճուկուլուն չգիտեր ոտքերի հետ ինչ անել, բայցև հասկանում էր, որ արդար չէ, երբ ինքը քառասուն, իսկ մյուսները ստիպված են երկու ձեռքով թիավարել ու քանի որ նա չափազանց արդարամիտ քառսունոտնուկ էր, հրաժարվեց թիա-

վարությունից: Սակայն, եթե թիավարության մասին շուտ մոռացավ, պարելու ցանկությունը չմարեց և միշտ նրա երազանքը մնաց: Ու հիմա պարողներին տեսնելով, իրենից անկախ ոգևորվեց... Սկզբում երաժշտության ռիթմով հերթականությամբ շարժում էր ոտքերը: Այնուհետև ոտքերով պարային մի քանի շարժումներ էլ արեց և կարծես ամեն ինչ բարեհաջող էր: Չդիմացավ ու որոշեց մոծակներից մեկին պարի հրավիրել: Քիչ հեռու կանգնած երկար ոտքերով մոծակը կարծես ձանձրանում էր և հետաքրքրությամբ իր կողմն էր նայում: Ճուկուլուն հենց առաջին պահից էր նկատել, որ այստեղ իրեն մի քիչ կասկածանքով ու մի քիչ զարմանքով են նայում, ու պատճառը երևի կոշիկներն էին: Սակայն հենց կոշիկներն էին նրան վստահություն ներշնչում: Եվ երևի նրա ինքնավստահությունն էր պատճառը, որ մոծակը միանգամից ընդունեց պարելու առաջարկը և Ճուկուլուն պարընկերուհու հետ հայտնվեց պարահրապարակի կենտրոնում: Սկզբում չէր կողմնորոշվում, որ ոտքերով գրկի մոծակին: Փորձեց առաջին երկու ոտքերով, որոնք կոշիկներով չէին, բայց չգիտեր, թե մյուս ոտքերն ինչ անի, որպեսզի չխանգարեն: Իսկ մոծակը բարալիկ մարմինը մի ոտքից մյուսն էր տեղափոխում, հասկացնելով, որ սպասում է: Ճուկուլուն խորաթափանց քառսունոտնուկ էր, գիտեր,

որ պարընկերուհուն երկար սպասեցնել չի կարելի: Եվ այլ որոշում չգտնելով, քառասուն ոտիկներով միանգամից գրկեց մոծակին, որից հետո մոծակը մի թույլ բզզոց հանեց, ապա քառասուն ոտքերի միջով անշնչացած սահեց գետնին: Պարահրապարակում միանգամից իրարանցում սկսվեց: Երաժշտությունը դադարեց և բոլորը շտապեցին օգնել ընկած մոծակին: Ճուկուլուն շփոթվել, չէր հասկանում ինչու պիտի այդպես լիներ: Իսկ երբ մոծակների խումբը վայրենի աղմուկով սկսեց բզզալ և տզզալ, Ճուկուլուն հասկացավ, որ մոծակները չարացած են ու գնալով ավելի են չարանում: Ուզում էր հասկացնել, որ չէր ուզում, որ մեղավոր չէ, որ այդ ամենը ակամայից, իր կամքից անկախ էր, բայց մոծակները բզզում - տզզում էին, ավելի ու ավելի մոտենալով Ճուկուլուին: Ամեն ինչից երևում էր, որ շատ չարացած են և չէին լսում ու չէին էլ ուզում լսել, թե նա ինչ է ասում: Այդ պահին պարահրապարակում միայն փորձանքն էր ուրախ: Հրճվանքից քամու պես պտտվում էր Ճուկուլուի շուրջը, սպասելով, բարկացած մոծակների հարձակմանը: Մինչդեռ Ճուկուլուն անելանելի վիճակի մեջ էր, անօգնական շուրջն էր նայում, սակայն ոչ մեկը չէր ուզում օգնել: Մնում էր փախչելը, բայց մոծակներն այնպես էին շրջապատել ու օղակի մեջ առել նրան, որ ճեղքելն ու դուրս պրծնելն անհնար էր թվում:

Օղակը ձեղքելու համար նախ պետք էր մի քանի վայրկյանով շեղել մոծակների ուշադրությունը, բայց ինչպե՞ս... Եվ երբ ուր որ է մոծակները վրա պիտի տային, Ճուկուլուն վերջապես որոշեց անելիքը և ոտքերից կոշիկները հանելով, ամբողջ ուժով շպրտեց մոծակների վրա: Ճուկուլուի անսպասելի արարքից մոծակները մի պահ խառնվեցին և նրանց կուռ օղակը քանդվեց: Ու մինչ մոծակները ուշքի կգային, Ճուկուլուն հասցրեց դուրս գալ շրջափակումից և լքել պարահրապարակը: Իմիջիայլոց, Ճուկուլուի արածից փորձանքն էլ հանկարծակիի եկավ և այնքան էր շփոթվել, որ չհասցրեց հետ քաշվել և Ճուկուլուի ոտքերի տակ ընկավ: Փորձանքը, ճիշտ է, մարմին չունի, բայց ցավ զգաց ու անսահման վիրավորվեց: Իհարկե, եթե Ճուկուլուն իմանար, որ որևէ մեկին տրորել է, անպայման ներողություն կխնդրեր, բայց չէր էլ զգացել, որ փորձանքի վրայով է անցել: Հիմա փորձում էր քառասուն ոտքերով ինչքան հնարավոր է արագ ու հեռու փախչել, սակայն որքան էլ արագ, մոծակների պարսն ավելի արագ էր թռչում և ուր որ է կրկին կհասներ Ճուկուլուին: Հակառակի պես Ճուկուլուն ցեխերի մեջ հայտնվեց ու վազելը դժվարացավ: Կոշիկներից մի քանիսը թաղվեցին ցեխերի մեջ ու մնացին: Սակայն կանգնելը վտանգավոր էր: Էլի մի քանի կոշիկ մնաց ցեխերի մեջ, մինչդեռ Ճուկու-

լուն շարունակում էր վազել, որովհետև հետևից մոծակների տզզոցի ու բզզոցի ձայնն ուժեղանում էր: Զգում էր, որ մոծակները համարյա մոտեցել են: Վերջապես դուրս եկավ ցեխից ու սկսեց ավելի արագ վազել: Բայց թիկունքում զգալով մոծակների աղմուկը, հասկացավ, որ եթե ուրիշ մի բան չմտածի, մոծակները նորից կշրջապատեն իրեն: Ու անսպասելի մի հսկա տերևի տակ հայտնվեց: Ավելի լավ թաքստոց չէր էլ գտնի: Մոծակներն արդեն պտտվում էին տերևի վերևում ու չէին հասկանում,



քառսունոտնուկն ուր և ինչպես անհետացավ: Փոր-ձանքն ուզում էր մատնել և անընդհատ բղավում էր. «Մեծ տերևի տակ է, մեծ տերևի տակ է», բայց մոծակները նրան չէին լսում: Ու միևնույն է, փոր-ձանքը չէր հանդարտվում և Ճուկուլուի տեղը ցույց տալու համար, ստիպված ինքն էլ տերևի տակ մտավ, սակայն մոծակները նրա այդ շարժումն էլ չտեսան և փորձանքն առաջին անգամ խորապես ափսոսեց, որ մարմին չունի ու իր ձայնը իրենից բացի ոչ ոք չի լսում: Մոծակներն անզորությունից շարունակում էին ավելի ու ավելի բարձր տզզալ ու բզզալ: Իհարկե, Ճուկուլուի բախտը բերեց, որ մո-ծակները խելք չունեն և չփորձեցին տերևների տակ նրան փնտրել: Սակայն անխելքները նույն-պես հոգնում են և ի վերջո մոծակները ապարդյուն տզզալուց-բզզալուց հոգնելով, եզրակացրեցին, որ վերջնականապես կորցրել են Ճուկուլուին, ու որո-շեցին այլևս չփնտրել ու հեռանալ: Ու քանի դեռ նրանց կարելի էր տեսնել, փորձանքը շարունա-կում էր գոռալ ու գոռգոռալ ու ոչ մի կերպ չէր ու-զում համակերպվել, որ Ճուկուլուն նորից է հաղթել իրեն: Ճուկուլուն մի քիչ էլ թաքնված մնաց տերևի տակ ու երբ ամեն ինչ հանդարտվել էր, տերևի տակից դուրս եկավ: Տերևի տակ մութ էր ու խոնավ և արևի լույսն ու ջերմությունը սովորականից ավե-լի հաճելի թվացին: Ու արևի լույսի տակ էլ նկատեց,

որ ամբողջովին ցեխոտված է: Նաև հիշեց, որ մի քանի կոշիկ էլ ցեխի մեջ է թողել: Արագորեն հաշվեց մերկ ոտքերը և զարմացավ, որ ցեխը իրենից յոթը կոշիկ է խլել: Յոթին գումարեց մոծակների վրա նետած երկու կոշիկները: Եվ այսպես, մի կոշիկը սարդը գողացավ, մյուսը առվակը ու երկուսին գումարեց ինը: Ստացվեց տասնմեկ: Քառասունից հանած տասնմեկ, մնաց քսանինը... Ու ինչպես իրեն, այնպես էլ կոշիկները ցեխից մաքրել էր պետք: Որոշեց դեպի առվակը վերադառնալ: Եվ տխուր էր, որ այդքան կոշիկ է կորցրել ու միաժամանակ ուրախ էր, որ կարողացել է փորձանքից անվնաս պրծել: Կարևորը ընկճված չէր, որովհետև հավատում էր, որ երջանկությունն ու ուրախությունը առջևում են: Այնպես որ.

Ով է փորձանքը,
Տրա-լյա-լա-լա,
Երբ կեցցե կյանքը,
Տրա-լյա-լա-լա...
Եվ ով է չարը
Տրա-լյա-լա-լա...
Կեցցե արդարը
Տրա-լյա-լա-լա,
Տրա-լյա-լա-լա ...

ՃՈՒԿՈՒԼՈՒՆ ԱՆԾԱՆՈԹ ՏԵՂԱՆՔՈՒՄ

Ճուկուլուն քիչ անց լսեց ջրի ձայնը և կռահեց, որ առվակը հեռու չէ: Հասնելով առվակին, ոտքերից հանեց բոլոր կոշիկները, խնամքով շարեց ափին ու սկսեց լվանալ: Չնայած քառասուն ոտիկներով էլ փորձում էր մաքրել, այնուամենայնիվ, դժվար գործ էր քսանինը կոշիկ ցեխից մաք-

ռելը: Բայց Ճուկուլուն համառ և ամենակարևորը, մաքարասեր քառսունոտնուկ էր և ինչքան էլ դժվար լիներ, ճանապարհը չէր կարող ցեխոտ կոշիկներով շարունակել: Մեկ-մեկ մաքրում էր կոշիկներն ու հետն էլ երգում էր.

Մեկը պրծա,
Մնաց մյուսը,
Ցեխը գնաց,
Բացվեց լույսը...

Ու փայլում են
Կոշիկները,
Դեղին, սպիտակ,
Գորշն ու սևը...

Վերջացնում եմ,
Կարծես պրծա,
Այ սա գործ էր,
Հրաշք էր սա:

Երբ վերջին կոշիկն էլ մաքուր էր, Ճուկուլուն խորը շունչ քաշեց և մի անգամ էլ համոզվեց, որ երգելով ինչ-որ բան անելն այնքան էլ դժվար չէ: Մնում

էր իրեն ցեխից մաքրել: Ճուկուլուն կոշիկները հագավ, մի անգամ էլ հիացավ նրանց մաքրությամբ, ծաղկի մի տերև պոկեց ու մոտեցավ առվակին: Տերևը թաթախում էր ջրի մեջ և թաց տերևով մաքրում էր մարմինը: Սակայն ցեխը չորացել, կպել էր մարմնին և դժվար էր մաքրվում: Ճուկուլուն ավելի մոտեցավ առվակին, որպեսզի կարողանա ավելի շատ ջուր վերցնել: Ամեն ինչ լավ էր ստացվում, հիանալի, այնքան հիանալի, որ ոգևորվեց, կորցրեց զգուշությունն ու ափի թաց խոտերի վրայով սահելով, ջուրն ընկավ: Սկզբում վախեցավ, քիչ էր մնում խուճապի մատնվեր, բայց հիշեց, որ թիավարության խմբակում նավակն անընդհատ շրջվում էր և ինքը ջուրն ընկնելիս ընդամենը շարժում էր ոտիկները և կարողանում էր ջրի վրա մնալ: Հիմա էլ նույնը փորձեց: Առվակը արագահոս էր և չնայած ափին մոտենալու Ճուկուլուի ջանքերին, ջուրը նրան տերևի պես քշում-տանում էր: Մյուս կողմից էլ առվակը քարքարոտ հուն ուներ և Ճուկուլուն վախենում էր, որ կարող է ոտիկները քարին խփել ու կոտրել: Մի պահ թվաց, որ այդպես էլ լինելու է և չի կարողանալու ոտիկները փրկել: Մինչ Ճուկուլուն տանջվում էր, թե ինչպես ջրից դուրս գա, չգիտես որտեղից հայտնված փորձանքը հրճվանքից կորց-

րել էր իրեն, սուրում էր ջրի ափով, սպասելով, թե Ճուկուլուն երբ է ոտիկները վնասելու ու ջրի տակն անցնելու: Այդ պահին փորձանքն ամեն ինչ կտար, որպեսզի ագռավի ձայնն իրենը լիներ ու ագռավի պես կարողանար այնպես գոռալ ու կռկռալ, որ անտառում բոլորն իմանային Ճուկուլուին պատահած դժբախտության մասին: Փորձանքն ափսոսում էր, որ ոտքեր չունի, եթե ոտքեր ունենար, այնպես կցատկեր, որ կկարողանար ամպերին հասնել և բոլոր ամպերը առվակի մեջ կքամեր, որպեսզի, ջուրն ավելի արագ Ճուկուլուին քշեր: Իսկ Ճուկուլուն ավելի ու ավելի դժվարությամբ էր ջրի երեսին մնում, հոգնածությունից ոտիկները համարյա չէին շարժվում: Մի պահ նայեց անտառի հսկա ծառերին, սաղարթների միջից երևացող կապույտ երկնքին ու անսահման տխրեց, որ այդպես էլ չմասնակցեց Կուկուլուի ծննդյան տոնին: Մտածում էր ուր որէ ջուրը կուլ կտա իրեն և անտառում այլևս ոչ ոք չի հիշի, որ Ճուկուլու անունով հրաշալի քառսունոտնուկ է եղել: Երբ Ճուկուլուին թվում էր այլևս միջոցները սպառվել են և փակել էր աչքերը, զգաց, որ ոտիկները չի շարժում, սակայն չի էլ սուզվում: Աչքերը բացեց ու տեսավ իրեն ինչ որ ձյուղի վրա: Այնքան ուրախ էր, որ նույնիսկ չփորձեց իմանալ

ձյուղը որտեղից հայտնվեց: Ամուր գրկել էր ձյուղն ու փորձում էր հանգստանալ: Երբ շունչը քիչ տեղն ընկավ, արդեն ափ դուրս գալու մասին էր մտածում, չնայած արագահոս առվակը ձյուղն էլ ու Ճուկուլուին էլ ավելի ու ավելի արագ էր քշում: Սակայն վտանգն արդեն անցել էր, մնում էր մտածել ինչպես կարելի է ձյուղն ափին մոտեցնել: Իսկ փորձանքը ոգևորությունից հետո նորից խեղճացել էր, ու ստվերի պես ծառերին ու խոտերին քսվելով էր շարժվում: Իսկ երբ նկատեց, որ երկու փոքրիկ ձկնիկները մոտեցան Ճուկուլուին և սկսեցին ձյուղին համընթաց լողալ, հուսահատությունից այնքան փոքրացավ, որ ինքն իրեն կորցրեց, սկսեց փնտրել ու չէր գտնում: Իսկ Ճուկուլուն ձկնիկներին տեսնելով առույգացավ: Ձկնիկները լողում էին ձյուղի երկու կողքով և զարմացած Ճուկուլուին էին նայում: Վերջապես ձկնիկներից մեկը գլուխը ջրից բարձրացնելով հարցրեց.

- Ոտքերը քո՞նն են:

- Իմն են:

- Այդքա՞նը... Ավելի լավ է լողակներ ու պոչ ունենայիր:

- Երևի, -համաձայնեց Ճուկուլուն, մտածելով օգնություն խնդրել ձկնիկներից:

- Ինչո՞ւ ես ձյուղի վրա, - հարցրեց ձկնիկներից երկրորդը:

- Ջրի մեջ կխեղդվեմ:

- Ուրեմը ցամաքի վրա մնայիր:

- Պատահաբար ջուրն ընկա:

- Հիմա ի՞նչ ես ուզում:

- Ճյուղը ափին մոտեցնել, - պատասխանեց Ճուկուլուն ու մինչ ձկնիկներից օգնություն կխնդրեր, ձկնիկները երկու կողմից սեղմվեցին ճյուղին և լողալով ճյուղն ափին մոտեցրին, որից հետո ցատկեցին ու այնպես արագ անհետացան, որ Ճուկու-



լուն չհասցրեց նույնիսկ շնորհակալություն հայտնել: Կարևորը, վերջապես նորից ցամաքի վրա էր և հաճույքից ամբողջ մարմնով փռվեց խոտերին: Եթե Ճուկուլուն ուրախ էր, ապա փորձանքը այնպես էր հուսահատվել, որ ուզում էր հեռանալ ու չէր կարողանում: Փորձանքին կատաղացնում էր, որ քառսունոտնուկը ամեն անգամ կարողանում է իրենից ազատվել: Պարզ է, որ Ճուկուլուն փորձանքի մասին չէր էլ մտածում: Խոտերին պառկած հանգստանում էր ու մտովի զրուցում ձկնիկների հետ: Երբ պատրաստվում էր նորից ճանապարհ ընկնել, նկատեց, որ նորից ոտքերից մի քանիսը առանց կոշիկների են: Առվակը ևս յոթ կոշիկ էր տարել: Ճուկուլուի ոտիկներից կոշիկները հեշտությամբ էին դուրս գալիս, որովհետև ոտքերին թաթեր և մատներ չուներ: Բայց կորուստի համար նախկինի պես չտխրեց, իմանալով, որ միևնույն է, կորցրածը հետ չես բերի: Անմիջապես քսանիննից հանեց յոթը և իմացավ, որ քսաներկու կոշիկ է մնացել: Քսաներկուսն էլ բաժանեց երկուսի և յուրաքանչյուր կողմում տասնմեկ կոշիկ ունեցավ: Երբ հաշվելն ավարտեց և ուզում էր ճանապարհը շարունակել, հասկացավ, որ չի կողմնորոշվում, որ կողմ գնալ: Չէր նկատել, որ տեղանքը լրիվ անծանոթ է: Այս-

տեղ և ծառերն էին ցածր և ծաղիկներն էին քիչ ու ոչ մի կերպ չէր պատկերացնում, թե 7-րդ բացատը որ ուղղությամբ է: Պիտի առվակի ափով վեր բարձրանար, մինչև ծանոթ տեղանքին կհասներ: Չէր պատկերացնում, թե առվակն իրեն ինչքան է հեռացրել, սակայն կարևորը չհուսահատվելն էր և հավատալը, որ ինչ էլ պատահի, եթե ուզում ես լինել այնտեղ, որտեղ շատ ես ուզում լինել, ապա անպայման տեղ կհասնես: Այնպես որ.

Դեպի, դեպի, դեպի վերև
Ջրի ափով վերև, վերև
Բարև ծաղիկ, թուփ ու տերև,
Բարև երկինք, բարև արև...
Դեպի, դեպի, դեպի վերև,
Մինչև ծանոթ թուփ ու տերև,
Բարև երկինք, բարև արև,
Ինձ հետ դեպի, դեպի վերև...

ՃՈՒԿՈՒԼՈՒՆ ԶԱՏԻԿՆԵՐԻ ԴՊՐՈՑՈՒՄ

Անտառի լանջը շատ թեք էր և Ճուկուլուն դժվարությամբ էր բարձրանում: Երբեմն կանգնում էր հանգստանալու, անհանգստանալով, որ այցելությունը 7-րդ բացատ երկարում է: Ու դեռ Կուկուլուին նվիրված բանաստեղծությունն էլ չի հորինել: Բայց ինքն իրեն հույս էր տալիս, որ և՛ տեղ կհասնի, և՛ բանաստեղծությունը կնվիրի Կուկուլուին: Կարևորը նոր արկածներ չհանդիպեն: Ճու-

կուլուն, ճիշտ է, արկածներ սիրում էր, բայց հիմա արկածները կարող էին ուշացնել տոնահանդեսից: Ճշտապահները, իսկ Ճուկուլուն ճշտապահ քառսունոտնուկ էր, չեն սիրում ուշանալ: Դրա համար պիտի արագ քայլել, սովորականից շատ ավելի արագ: Ու քայլում էր ինքնամոռաց, թիզ առ թիզ հաղթահարելով լանջի թեքությունը: Քայլում էր պատկերացնելով ինչպես է հանդիպում Կուկուլուին և արտասանում նրան նվիրված բանաստեղծությունը: Համոզված էր, որ մինչև 7-րդ բացատ հասնելը, բանաստեղծությունը անպայման կհորինի: Իսկ երբ հերթական անգամ կանգնեց հանգստանալու, ականջին տարօրինակ ձայներ հասան: Սկզբում նույնիսկ վախեցավ, կարծելով, մոծակները հետապնդել և գտել են իրեն, որովհետև աղմուկը ավելի բզզոցի էր նման: Սակայն մոծակները վերևից էին աղմկում, իսկ այս աղմուկը ներքևից էր: Եվ չնայած ուշանում էր, հետաքրքիր էր, ում ձայնն է և որտեղից է գալիս: Հնարավոր է օգնություն է հարկավոր, և Ճուկուլուն չէր կարող ձևացնել, իբր, չի լսում ու անտարբեր շարունակեր ճանապարհը: Եվ առանց հապաղելու շտապեց ձայնի ուղղությամբ: Տեսածը և՛ զարմացրեց, և՛ ուրախաց-

ռեց: Աղմկողը փոքրիկ զատիկներն էին: Իրեց փոքրիկ թևիկները բացած, հավանաբար ինչ-որ բանից դժգոհ, բզզում էին, իսկ ավելի մեծ զատիկը, որը երևի նրանց ուսուցիչն էր, փորձում էր չարաճճիներին լռեցնել ու չէր կարողանում: Միջատների ու կենդանիների դպրոցները միշտ էլ դրսում են լինում, որևէ հսկա ծառի սաղարթների տակ: Այս դպրոցն էլ հսկա կաղնու տակ էր, միայն թե հազվադեպ է լինում, որ աշակերտներն այսպես, բոլորը միասին աղմկեն: Պետք էր օգնել ուսուցչին, և Ճուկուլուն արագորեն հայտնվեց նրա կողքին: Ճուկուլուին տեսնելով, աշակերտները միանգամից լռեցին և զարմացած նրան էին նայում: Օգտվելով լռությունից, Ճուկուլուն փորձեց ուսուցչից աղմուկի պատճառն իմանալ: Պարզվեց թվաբանության դաս է, իսկ փոքրիկ զատիկները ուզում են թռչել սովորել: Կողմնորոշվելով Ճուկուլուն կանգնեց զատիկների դիմաց, և ոտիկները աջ ու ձախ տարածելով, դիմեց փոքրիկներին:

- Ո՞վ կարող է ոտքերս հաշվել:

Մի քանի զատիկ փորձեցին նորից աղմկել, բայց տեսնելով, որ մյուսները հաշվում են, միացան նրանց: Վերջապես ինչ-որ մեկը բղավեց.

- Քառասուն:

- Ճիշտ է,- ասաց Ճուկուլուն ու մի նոր խնդիր առաջարկեց: - Հիմա հաշվեք, թե քառասուն ոտքերից քանիսն են կոշիկներով:

Զատիկներն ասես մոռացել էին, որ քիչ առաջ թվաբանությունից հրաժարվում էին և ամեն մեկը փորձում էր ընկերներից արագ հաշվել:

- Քսաներկու,- մի քանի ձայն համարյա միանգամից բղավեցին:

- Նորից ճիշտ է,- հաստատեց Ճուկուլուն, որից փոքրիկ զատիկները աշխուժացան և սպասում էին Ճուկուլուի նոր հարցին:

- Սկզբում կոշիկները քառասունն էին, - շարունակեց Ճուկուլուն,- և հիմա որոշ կոշիկներ չկան: Կարո՞ղ եք հաշվել, քանի՞ կոշիկ եմ կորցրել:

- Տասնութ,- շատ արագ պատասխանեց զատիկներից մեկը:

- Ինչպե՞ս հաշվեցիր:

- Երբ հաշվում էի ոտքերից քանիսն են կոշիկներով, հաշվեցի նաև քանիսն են առանց կոշիկների:

- Ապրես, - գովեց նրան Ճուկուլուն: - Հիմա ո՞վ կարող է ասել, թե ամեն կողմում ոտքերից քանի՞սն

են կոշիկներով, եթե երկու կողմերում դրանք հավասար են:

- Տասնմեկ,- այս անգամ էլ պատասխանեցին մի քանի հոգով: - Քսաներկուսը բաժանած երկուսի, կանի տասնմեկ...

Դրանից հետո Ճուկուլուն որոշեց զատիկների համար մի թվաբանական բանաստեղծություն հորինել:

Երկու զատիկ բարձրացան,
Երկու փոքրիկ զատիկ,
Զատիկները շատացան
Դարձան թվով հինգ:

Նորից չորսը թռան վեր
Նորից ութն ու յոթը
Այսքան կարմիր զատիկներ
Կարմիր դարձրին օդը:

Քանի՞ զատիկ հավաքվեց
Տասնհինգ, թե՞ քսանը:
Դասը կարծես ավարտվեց,
Գտեք պատասխանը:

Մի պահ լռություն տիրեց, բայց քիչ անց զատիկները մեկը մյուսին հերթ չտալով բղավում էին. «Քսանչորս, քսանչորս, քսանչորս»... Սրանով դասն իսկապես էլ ավարտված էր: Ճուկուլուն անկեղծ զարմացած էր փոքրիկ զատիկների գիտելիքներից և այդ մասին հայտնեց ուսուցչին: Ուսուցիչը բացատրեց, որ հաշվելը զատիկների համար կարևոր է, որպեսզի իմանան, ինչքան հեռու են թռչել ու կարողանան ժամանակին տուն վերադառնալ: Ապա շնորհակալություն հայտնեց Ճուկուլուին, որ կարողացավ զատիկներին հանգստացնել և հետաքրքիր դաս վարել: Սակայն Ճուկուլուն ավելի գոհ էր, որ կարողացել է օգնել: Եվ երբ ուզում էր հեռանալ, զատիկներից մեկը, ով կարողանում էր բոլորից արագ հաշվել, մոտեցավ Ճուկուլուին և խնդրեց կոշիկներից մեկն իրեն նվիրել:

- Ինչի՞դ է պետք,- զարմացավ Ճուկուլուն:

- Տուն եմ սարքելու,- համարձակ պատասխանեց զատիկը:

- Չի կարելի, - փորձեց զատիկին սաստել ուսուցիչը:

- Ոչինչ,- մեծահոգաբար ասաց Ճուկուլուն,-

Շատ եմ կորցրել: Ոչինչ չի լինի, եթե մեկն էլ ինքը վերցնի... Ընտրիր որն ես ուզում...

- Շնորհակալություն,- ուրախությունից ցատկոտեց զատիկը ու սկսեց պտտվել Ճուկուլուի շուրջը: Քիչ անց կարմիր, երկար ճիթքերով կոշիկը ցույց տվեց: Ճուկուլուն հենց այդ կոշիկն էլ նրան նվիրեց: Զատիկն անմիջապես կոշիկի մեջ մտավ և կոշիկի միջից բղավում էր, որ ներսում շատ հարմարավետ և տաքուկ է: Ճուկուլուին մնում էր հրաժեշտ տալ բոլորին ու կրկին առվակի ափով վեր բարձրանալ: Սկսել էր անհանգստանալ, որ հնարավոր է ուշանա: Փորձանքի հույսն էլ հենց նրա ուշանալն էր, մտածելով էլ ի՞նչ անի, որպեսզի Ճուկուլուն չհասցնի ժամանակին 7-րդ բացատ հասնել: Արդեն մի փոքր ճանաչել էր Ճուկուլուին և հասկացել էր, որ արժանի հակառակորդ է, սակայն եթե մինչև վերջ ճանաչեր, ապա այլևս հանգիստ կթողներ նրան: Սակայն փորձանքը նրա համար է փորձանք, որ ոչ մի բան երբեք մինչև վերջ չի ճանաչում:

ՁՈՐԸ ԽԼՈՒՄ Է ՃՈՒԿՈՒԼՈՒԻ ԿՈՇԻԿՆԵՐԸ

Ճուկուլուն տնքալով, բայց բավականին հեշտությամբ էր հաղթահարում տեղանքի թեքությունը: Երբեմն կանգնում, շունչ էր քաշում, որից հետո փորձում էր ավելի արագ շարժել ոտիկները: Քայլում էր ու զարմանում, որ Կուկուլուին նվիրված բանաստեղծությունը չի կարողանում հորինել: Ասենք այնպիսի մի բանաստեղծություն, որը կհիացներ տոնահանդեսի մասնակիցներին և կստիպեր նրանց մի անգամ էլ շնորհավորել Կուկուլուին: Առայժմ ինչ հորինում էր, հասարակ էր թվում և այնքան սովորական, որ մտածում էր չարժե նման բանաստեղծությունը Կուկուլուի պես քառսունոտնուկին նվիրել: Եվ որոշեց 7-րդ բացատին մոտենալիս մի անգամ էլ փորձել: Հիմա նախ պետք էր տեղ հասնել: Արևը զենիթից թեքվել էր դեպի արևմուտք և մի քանի ժամից կհայտնվեր սարերի ետևում: Ճուկուլուն խավարը չէր սիրում, որովհետև երբ մութը խտանում էր, ոչինչ չէր երևում այլևս և ստիպված պիտի քնելու հարմար տեղ գտներ: Այն-

պես որ, եթե ուշանար, ստիպված էր քնելու տեղ փնտրել: Ու փորձում էր ավելի ու ավելի արագ շարժել ոտիկները: Չնայած հոգնել էր, բայց նույնիսկ հանգստանալու համար չէր կանգնում: Հակառակի նման էլ առվակը անսպասելի անհետացավ: Ստիպված էր փոքր ինչ հետ գնալ և առվակի ետ նորից բարձրանալ: Միայն այդ պահին նկատեց, որ առվակը հասնելով ժայռին, անհետանում էր քարերի տակ: Հարկավոր էր իմանալ, քարերի տակից նորից որտեղ է դուրս գալիս: Բայց դիմացը խորը ձոր էր, որի հատակը չէր երևում: Զարմացավ, որ առվակն իրեն էլ է քարերի տակով քշել ու ինքը չի զգացել: Սակայն երկար զարմանալու ժամանակ չկար, հարկավոր էր որոշել, ինչպես ձորն անցնել: Ձորն իջնելն ու մյուս կողմում բարձրանալը երկար կտևեր: Մոտակայքում էլ կամուրջ չէր երևում: Եվ Ճուկուլուն առաջին անգամ փոքր ինչ խուճապի մատնվեց: Փոխարենը փորձանքն էր կրկին ոգևորվել, համոզված, որ այս անգամ անպայման կհաղթի ճուկուլուին և Ճուկուլուն կիմանա ով է ինքը: Եվ չնայած վախենում էր ձորի խորությունից, պտտվում էր Ճուկուլուի գլխավերևում և սպասում էր, թե երբ է Ճուկուլուն հուսահատությունից լաց լի-

նելու: Բայց Ճուկուլուն չէր ուզում նահանջել, այլ փորձում էր ելք գտնել: Որոշեց աջ կամ ձախ գնալ: Հեռվում ինչ-որ սյուն տեսավ և քայլերն արագացրեց: Հասնելով սյանը, Ճուկուլուն ուրախությունից այնպես ցատկեց, որ մի քանի կոշիկ ոտքից թռան ու աղմկելով ձորը գլորվեցին: Սակայն սյունը Ճուկուլուին շատ էր ոգևորվել և կոշիկների համար չհասցրեց ափսոսել: Էլեկտրասյունից, իսկ դա իսկապես էլեկտրասյուն էր, էլեկտրալարը ձգվում-հասնում էր մինչև ձորի մյուս ափին կանգնած սյունը: Ճուկուլուն համարձակ քառսունոտնուկ էր և արդեն որոշել էր, որ ձորը էլեկտրալարի վրայով է անցնելու: Սակայն մինչև մյուս ափը տարածությունը երկար էր և վտանգավոր ու դժվար պիտի լիներ այն հաղթահարել: Մյուս կողմից էլ արևը համարյա սարերի ուսին էր և եթե չէր ուզում ուշանալ, պիտի անհապաղ լարի վրա լիներ: Քիչ անց Ճուկուլուն հասկացավ, որ արագ շարժվելու համար պետք էր ոչ թե լարը գրկել, այլ լարի վրայով քայլել: Ու այդ պահից Փորձանքը շունչը պահած սպասում էր, թե Ճուկուլուն երբ է ընկնելու: Փորձանքը վստահ էր, որ անպայման ընկնելու է ու քարերին խփվելով փոշի է դառնալու: Ու ամեն ինչ մոռացած միայն վերև էր

նայում, որպեսզի ընկնելու պահը բաց չթողնի: Այնքան էր տարվել ու հրապուրվել Ճուկուլուի ընկնելու տեսարանով, որ զգուշությունը կորցնելով, ձորի եզրին էր հայտնվել: Ու երբ մի պահ Ճուկուլուն օրորվեց լարի վրա, փորձանքին թվաց վերջ, արդեն ընկնում է և ուրախությունից այնպես ցատկեց, որ ինքը ձորն ընկավ: Ճուկուլուն, իհարկե, չիմացավ ինչ կատարվեց ներքևում և թե փարձանքն ինչ փորձանք բերեց ինքն իր գլխին: Հիմա ամենակարևորը ոտիկները լարի վրա տեղավորելն էր: Առաջին ոտքերի կոշիկները ոտքերից ընկան ու ձորը կոկորդիլոսի պես կուլ տվեց կոշիկները: Ճուկուլուն ինչքան փորձում էր փրկել կոշիկները, չէր ստացվում, որից հետո դադարեց կոշիկների մասին մտածել և մեկը մյուսի ետևից լարի վրա բարձրացրեց ոտիկները: Վերևում հասկացել էր, որ կոշիկներով դժվար կլինի լարի վրայով քայլել և վերջին կոշիկներն ինքը ձորը գցեց: Վերջապես ամբողջ մարմնով լարի վրա էր: Եղավ, որ քիչ էր մնում հավասարակշռությունը կորցներ ու ընկներ, բայց քառասուն ոտիկների օգնությամբ կարողանում էր լարին կառչած մնալ: Զգում էր, որ տարածությունը կրճատվում է, սակայն ուշադրությունը չէր թուլաց-

նում: Չնայած խոտերի, ծառերի ճյուղերի վրայով շատ էր քայլել, բայց հիմա ուրիշ էր: Ձորը մագնիսի պես իր խորքն էր ձգում, խանգարելով առաջ շարժվել: Իսկ Ճուկուլուն առաջ էր գնում: Մնացած հատվածն ավելի արագ անցավ և ահա ձորափին էր: Միայն ափսոս, որ ոտքերն էլի առանց կոշիկնե-րի էին: Բայց կոշիկները կորցնելուց ավելի տխրում էր, որ ուշանում է և ժամանակին տեղ չի հասնելու: Ճուկուլուն չէր սիրում ուշանալ և չէր սիրում, երբ մի բան էր մտածում ու այդ բանը չէր կարողանում անել: Եվ նորից աշխարհի ամենատխուր քառսու-նոտնուկը Ճուկուլուն էր: Իսկ արևը սարերի ուսից իջնում էր և սպասելու միտք էլ չուներ: Գոնե Կուկու-լուին նվիրված բանաստեղծությունը գրած լիներ...

ՊԱՀԱՊԱՆ ՀՐԵՇՏԱԿԸ ԳՏՆՈՒՄ Է ՃՈՒԿՈՒԼՈՒԻՆ

Արևը կիսով չափ արդեն սարերի հետևում էր: Ճուկուլուն այլևս չէր շտապում: Ինչքան էլ արագ գնար, միևնույն է, ուշանալու էր: Քիչ անց, երբ արևը վերջնականապես կթաքնվի սարերի թիկունքում, անտառը կլցվի խավարով, նույնիսկ դժվար կլինի 7-րդ բացատի ճանապարհը գտնել: Առավոտյան հիանալի տրամադրություն ուներ, կոշիկները փայլում էին արևի շողերից, բանաստեղծություններն իրենք իրենց էին ծնվում: Հիմա տխուր էր, կոշիկները չկային և բանաստեղծություն էլ չէր կարողանում հորինել: Մյուս կողմից էլ ծանոթ ճանապարհին հասնելու համար դեռ պիտի բարձրանար: Առաջին անգամ Ճուկուլուն ոչինչ չէր ուզում անել, և եթե ոչինչ չէր անելու, ավելի լավ է փակեր աչքերն ու երազեր: Եվ այդպես էլ արեց, փակեց աչքերը, պատկերացրեց իրեն տոնահանդեսում, Կուկուլուի հետ պարելիս ու հաճույքից մարմինը ջերմացավ, թուլացավ ու երանության մեջ հայտնվեց: Տոնահանդեսում բոլորն ուրախ էին, ամենուր պայծառ ու լուսավոր էր և անընդհատ իր

սիրած երաժշտություն էր հնչում: Ուրիշների ուրախությունը տեսնելով, նույնիսկ ինքն իրեն հուսադրեց, որ եթե այնտեղ լիներ, ապա իր տխրությունը կխանգարեր ու մյուսներին չէր թողնի ուրախանալ: Հետո հասկացավ, որ եթե ժամանակին այնտեղ լիներ, ինչո՞ւ պիտի տխուր լիներ ու չուրախանար: Տխուր է, որովհետև ուշացել է և այնտեղ չէ: Չէր ուզում աչքերը բացել, որպեսզի չտեսնի ինչպես է արևը թաքնվել սարերի ետևում և ինչպես է մութը ծառերի տերևների միջով իջնում գետնին: Ու աչքերը փակ էլ տողեր էր արտասանում.

Մութ է, մութ է...
Մութը օդին
Կպած ձյութ է...

Մութ է, մութ է,
Ու տխուր է,
Նաև ցուրտ է:

Մութ է, մութ է
Ձյութ է, ցուրտ է...

Եվ անսպասելի իր անունը լսեց: Մեկը քնքուշ ձայնով կանչում էր՝ Ճուկուլո՜ւ, Ճուկուլո՜ւ... Մտածեց, թվացել է: Բայց, երբ էլի լսեց, բացեց աչքերը: Դիմացի փոքրիկ թփին ծանոթ թափանցիկ թռչնավորն էր ու նա էլ կանչում էր իրեն: Առաջին պահին կարծեց երազ է տեսնում:

- Երազ չէ,- ասաց թռչնավորը,- քո պահապան հրեշտակին էլ չես ճանաչում:

- Երազ կլինի,- չհավատաց Ճուկուլուն, համոզվելու համար տրորելով աչքերը:

- Համոզվեցի՞ր,- հարցրեց հրեշտակը:

- Որ երազ չէ, ինչպե՞ս ես երևում:

- Եթե պետք է, երևում ենք:

- Հիմա ինչի՞ համար է պետք եղել:

- Քեզ օգնելու:

- Ինձ օգնելո՞ւ,- զարմացավ Ճուկուլուն:

- Զարմանում ես, իբր, քիչ եմ օգնել: Ամբողջ օրը օգնել եմ... Երբ ջուրը քշում էր, ձյուղը ես նետեցի ու ձկնիկներին խնդրեցի օգնել: Ես հուշեցի, որ մոծակներից ազատվելու համար մեծ տերևի տակ մտնես: Էլեկյտրասյուներն ու էլեկտրալարը հորինեցի, որ կարողանաս ձորն անցնել:

- Միևնույն է, ուշացա:

- Այնքան էլ չէ: Արևը սարերի հետևից դեռ լուսավորում է:

- Կապ չունի... Բացատի տեղն էլ եմ կորցրել և չգիտեմ ոնց եմ գնալու:

- Բա ես ինչի՞ համար եմ:

- Ինչի՞ համար ես, - հարցրեց Ճուկուլուն:

- Որ օգնեմ բացատում հայտնվես:

- Մինչև հասնե՛ե՛ ե՛նք...,- ոտիկները թափ տվեց Ճուկուլուն և դեռ չէր հասցրել խոսքը վերջացնել, երբ երկնքից բազմաթիվ թափանցիկ թևավորներ իջան, գետնից բարձրացրեցին Ճուկուլուին ու օդի միջով տարան: Ճուկուլուն չէր հասկանում ինչ է կատարվում, սակայն, երբ հրեշտակները նրան նորից գետնին իջեցրին, զարմացավ, որ արդեն 7-րդ բացատում է, իսկ հետո այնքան ուրախացավ, որ այս անգամ էլ մոռացավ հրեշտակներին շնորհակալություն հայտնել: Իսկ հրեշտակներն արդեն հեռացել էին, չկային: Մտածեց, որ շնորհակալությունը մի ուրիշ անգամ կհայտնի: Արդեն հավատում էր, որ հրեշտակները միշտ իր հետ են լինելու և հավատում էր, որ ինչ-որ բան եթե շատ ես ցանկանում, ապա անպայման լինում է: Ճուկուլուն անմիջապես նկատեց Կուկուլուին ու արագ նրա կողմը գնաց:

Ծաղիկների, թփերի վրա հարյուրավոր լուսատ-տիկներ կային և չնայած արևն արդեն սարերի հետևում էր, բացատը լուսավոր-լուսավոր էր, կարծես երկինքն իր բոլոր աստղերով իջել էլ մասնակցելու հանդեսին: Իսկ ամենազարմանալին Ճուկուլուի ու Կուկուլուի հանդիպումն էր, տեսնել էր պետք, թե քառսունոտնուկներն ինչպիսի սիրով ողջագուրվեցին: Երաժշտությունը շարունակվում էր և Ճուկուլուն Կուկուլուին պարի հրավիրեց: Կուկուլուի հետ ուրիշ էր, Կուկուլուի հետ պետք չէր տանջվել, թե որ ոտիկներով պարի: Նրանք իրենց քառասուն ոտիկներով այնպես ներդաշնակ մտան պարի մեջ, ասես ամբողջ կյանքում միասին էին պարել: Ճուկուլուն նայում էր Կուկուլուին և զգում էր, որ իր ուրախությունը հնարավոր չէր բառերով նկարագրել: Այստեղ, միայն Կուկուլուին հանդիպելուց հետո ասես հասկացավ, որ իսկական ընկերությունն ու բարեկամությունը առանց բառերի էլ հասկանալի ու սիրելի է: Իսկ գուցե ավելի շուտ էր հասկացել և դրա համար էլ Կուկուլուին նվիրված բանաստեղծությունը չկարողացավ հորինել:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԵՌԱԳԻՐ ՃՈՒԿՈՒԼՈՒԻՆ 3
ՃՈՒԿՈՒԼՈՒՆ ԳՆՈՒՄ Է ԿՈՇԻԿՆԵՐԻ ԽԱՆՈՒԹ 9
ԿՈՇԻԿՆԵՐԻ ԽԱՆՈՒԹՈՒՄ 14
ՃՈՒԿՈՒԼՈՒԻ ԵՐԱԶԸ 21
ՃԱՆԱՊԱՐՀ ԴԵՊԻ 7-ՐԴ ԲԱՑԱՏ 28
ՃՈՒԿՈՒԼՈՒՆ ՄԻ ԿՈՇԻԿ ԷԼ Է ԿՈՐՑՆՈՒՄ 35
ՓՈՐՁԱՆՔԸ ՀԵՏԱՊՆԴՈՒՄ Է ՃՈՒԿՈՒԼՈՒԻՆ 41
ՃՈՒԿՈՒԼՈՒՆ ՊԱՐԱՀԱՆԴԵՍՈՒՄ 45
ՃՈՒԿՈՒԼՈՒՆ ԱՆԾԱՆՈԹ ՏԵՂԱՆՔՈՒՄ 54
ՃՈՒԿՈՒԼՈՒՆ ՁԱՏԻԿՆԵՐԻ ԴՊՐՈՑՈՒՄ 62
ՁՈՐԸ ԽԼՈՒՄ Է ՃՈՒԿՈՒԼՈՒԻ ԿՈՇԻԿՆԵՐԸ 69
ՊԱՀԱՊԱՆ ՀՐԵՇՏԱԿԸ ԳՏՆՈՒՄ Է ՃՈՒԿՈՒԼՈՒԻՆ 74

ՍԱՄՎԵԼ ԿՈՍՅԱՆ

ԱՄԵՆԱՏԽՈՒՐ ԵՎ ԱՄԵՆԱՈՒՐԱԽ ՔԱՌՍՈՒՆՈՏՆՈՒԿԸ

САМВЕЛ КОСЯН

САМЫЙ ГРУСНЫЙ И САМЫЙ ВЕСЕЛИЙ СОРОКОНОЖКА

Խմբագիր՝ Արմեն Ավանեսյան
Ձևավորումը և էջադրումը՝ Արմինե Քոչարյանի

Տպագրությունը՝ օֆսեթ
Չափսը՝ 60x84 1/16
Ծավալը՝ 5.0 տ.մ.
Թուղթը՝ կավձ. 115 գ.
Տառատեսակը՝ Ghabuzian Tigran
Տպաքանակը՝ 400
Տպագրությունը՝ «ԵԳԵԱ» ՍՊԸ
Հասցե՝ Ք. Երևան, Հակոբ Հակոբյան 3

ԱՐՄԱՎ
ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

Ք. Երևան, 16 թ. 18 / 94
հեռ.՝ (+374) 10-34-73-35
էլ.փոստ՝ armav-hrat@mail.ru